

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**(Երեւանի ավտոբուսների ծրագիր)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՒ**

**«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**ԵՒ**

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ**

**միջեւ**

Դրամաշնորհային համաձայնագրի այս նախագիծը պատրաստվել է միայն նախնական քննարկման նպատակով: **Կարող են ավելացվել լրացուցիչ վավերապայմաններ, ներկայիս խմբագրությամբ տեքստը կարող է փոփոխվել եւ ենթակա է վերջնական հաստատման Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից:**

Արեւելյան Եվրոպայի էներգախնայողության եւ շրջակա միջավայրի գործընկերության (E5P) ներդրումային դրամաշնորհի կապակցությամբ

Ամսաթիվ՝ 2021 թվականի նոյեմբերի 24

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| ՀՈԴՎԱԾ I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ .....  | 3  |
| Բաժին 1.01 Սահմանումներ .....  | 3  |
| Բաժին 1.02 Մեկնաբանում .....   | 7  |
| ՀՈԴՎԱԾ II. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ .....  | 8  |
| Բաժին 2.01 Գումար, արժույթ եւ նպատակ .....   | 8  |
| Բաժին 2.02 Միջոցների հատկացում .....   | 9  |
| Բաժին 2.03 Փոխհատուցման պայմանական եւ ոչ պայմանական<br>պարտավորություններ .....                                    | 13 |
| Բաժին 2.04 Վերաբաշխում .....   | 14 |
| Բաժին 2.05 Պետության կողմից չեղարկում .....  | 14 |
| Բաժին 2.06 Վճարումներ .....  | 14 |
| ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ .....  | 15 |
| Բաժին 3.01 Համագործակցություն եւ տեղեկատվություն .....   | 15 |
| Բաժին 3.02 Ծրագրի իրականացման հետ կապված<br>պարտականություններ .....   | 16 |
| Բաժին 3.03 Բնապահպանական եւ սոցիալական նորմերին<br>համապատասխանություն .....                                       | 17 |
| Բաժին 3.04 Պետության՝ աջակցելու պարտավորությունը .....   | 18 |
| Բաժին 3.05 Ծրագրի իրականացման գրասենյակը .....   | 20 |
| Բաժին 3.06 Գնումներ .....  | 20 |
| Բաժին 3.07 Ծրագրի վերաբերյալ գրառումները եւ<br>հաշվետվությունները.ստուգումներ .....                                | 20 |
| ՀՈԴՎԱԾ IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ...   | 23 |
| Բաժին 4.01 Ֆինանսական գրառումներ եւ հաշվետվություններ .....  | 23 |
| Բաժին 4.02 Բիզնեսի վարումը եւ գործառնությունները .....   | 25 |
| Բաժին 4.03 Հարկեր .....  | 26 |
| Բաժին 4.04 Տեսանելիություն .....   | 26 |
| Բաժին 4.05 Խարդախություն եւ կոռուպցիա .....  | 27 |
| ՀՈԴՎԱԾ V. ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄ. ՀԱՏՈՒՅՈՒՄ .....   | 27 |
| Բաժին 5.01 Կասեցում .....  | 27 |
| Բաժին 5.02 Բանկի կողմից չեղարկումը .....   | 31 |
| Բաժին 5.03 Փոխհատուցման ոչ պայմանական պարտավորություններ,<br>որոնց վրա չի տարածվում կասեցումը կամ չեղարկումը ..... | 33 |
| Բաժին 5.04 Պետության եւ Ծրագրի իրականացման<br>կազմակերպության պարտավորությունները .....                            | 33 |
| Բաժին 5.05 Հատուցման դեպքերը .....   | 33 |

|  |           |
|--|-----------|
| ՀՈԴՎԱԾ VI. ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ .....                                   | 34        |
| Բաժին 6.01 Կիրառելիությունը .....  | 35        |
| Բաժին 6.02 Իրավունքների իրացումից չօգտվելը .....                                   | 35        |
| Բաժին 6.03 Վեճերի լուծումը .....   | 35        |
| ՀՈԴՎԱԾ VII. ՈՒԺԻ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ. ԴԱԴԱՐԵԼԸ .....                              | 36        |
| Բաժին 7.01 Ուժի մեջ մտնելու ամսաթիվը .....   | 36        |
| Բաժին 7.02 Ուժի մեջ մտնելու նախապայմանները .....                                   | 36        |
| Բաժին 7.03 Իրավաբանական եզրակացություն .....                                       | 37        |
| Բաժին 7.04 Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը .....                                 | 38        |
| Բաժին 7.05 Կատարման արդյունքում դադարելը .....                                     | 38        |
| ՀՈԴՎԱԾ VIII . ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....  | 39        |
| Բաժին 8.01 Ծանուցումները .....   | 39        |
| Բաժին 8.02 Գործելու լիազորություն .....  | 41        |
| Բաժին 8.03 Փոփոխությունները .....  | 41        |
| Բաժին 8.04 Անգլերենը .....   | 42        |
| Բաժին 8.05 Փոխհատուցումը .....   | 42        |
| Բաժին 8.06 Հանձնարարությունները .....  | 43        |
| Բաժին 8.07 Իրավունքները, պաշտպանության միջոցները եւ<br>հրաժարումները .....         | 43        |
| Բաժին 8.08 Տեղեկությունների բացահայտումը .....                                     | 44        |
| Բաժին 8.09 Կրկնօրինակները .....  | 45        |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ<br/>ՊԱՐԱԳԱՆԵՐԸ .....</b>       | <b>46</b> |
| <b>ԱՌԴԻՐ 1. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ .....</b>                          | <b>1</b>  |
| <b>ԱՌԴԻՐ 2. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ<br/>ՆԱՄԱԿԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ .....</b> | <b>1</b>  |

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՆԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Պետություն), «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՔՈՒՍ» ՓԲԸ-ի (Ծրագրի իրականացման կազմակերպություն) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ եւ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ (Բանկ կամ ՎՋԵԲ) միջեւ 2021 թվականի նոյեմբերի 4-ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

### ՆԱԽԱԲԱՆ

#### ՔԱՆԻ ՈՐ՝

Ա) ՎՋԵԲ-ը միջազգային ֆինանսական հաստատություն է, որը ստեղծվել է միջազգային իրավունքի համաձայն՝ «Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հիմնադրման մասին» 1990 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան **(Բանկի հիմնադրման մասին համաձայնագիր)**:

Բ) Պետությունը դիմել է Ծրագրի (որը սահմանված է ստորեւ) մի մասի ֆինանսավորման հարցում աջակցություն ստանալու խնդրանքով, եւ Ծրագրով նախատեսված է օգնել Երեւան քաղաքի **(Քաղաքապետարան)** համար ձեռք բերելու մոտավորապես 100 միավոր ժամանակակից, 12 մետրանոց, ցածր հատակով, սեղմված բնական գազով **(ՍԲԳ)** աշխատող ավտոբուսներ՝ բարելավելու քաղաքի հասարակական տրանսպորտի ցանցը եւ օդի աղտոտման խնդիրը:

Գ) Բանկը նպատակ ունի կնքել վարկային համաձայնագիր Պետության՝ որպես Վարկառուի հետ, համաձայն որի Բանկը՝ որպես վարկատու, կտրամադրի վարկ՝ մինչեւ 20 000 000 (քսան միլիոն) եվրո գումարի չափով՝ Ծրագրի մի մասի ֆինանսավորման համար, ինչպես նկարագրված է Ծրագրին կից ներկայացված Հավելված 1-ում **(Ծրագիր)**՝ վարկային համաձայնագրում սահմանված ժամկետներին եւ պայմաններին համապատասխան, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվել **(Վարկային համաձայնագիր)**:

Դ) Վարկային համաձայնագրով սահմանված վարկային միջոցները Ծրագրի իրականացման նպատակով Պետության կողմից պետք է փոխանցվեն Ծրագրի իրականացման կազմակերպությանը՝ ժամկետների եւ պայմանների համաձայն, եւ այդ համաձայնագիրը պետք է կնքվի Պետության, Քաղաքապետարանի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության միջեւ եւ կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվել (**Իրականացման համաձայնագիր**):

Ե) Բանկը նաեւ նպատակ ունի Ծրագրի իրականացման կազմակերպության հետ կնքել ծրագրի համաձայնագիր, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվել (**Ծրագրի համաձայնագիր**), համաձայն որի Ծրագրի իրականացման կազմակերպությունը համաձայնում է իրականացնել Ծրագիրը՝ Ծրագրի համաձայնագրում սահմանված պայմաններին եւ ժամկետներին համապատասխան՝ հաշվի առնելով Բանկի կողմից ստորագրված Վարկային համաձայնագիրը եւ սույն Համաձայնագիրը:

Զ) Բացի այդ, Բանկը նաեւ նպատակ ունի Քաղաքապետարանի հետ կնքել ծրագրի աջակցության համաձայնագիր, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվել (**Ծրագրի աջակցության համաձայնագիր**), համաձայն որի Քաղաքապետարանը համաձայնում է աջակցել Ծրագրի իրականացման կազմակերպությանը Ծրագրի իրականացման հարցում՝ Ծրագրի աջակցության համաձայնագրում սահմանված պայմաններին եւ ժամկետներին համապատասխան՝ հաշվի առնելով Բանկի կողմից ստորագրված Վարկային համաձայնագիրը եւ սույն Համաձայնագիրը:

Է) Բանկի հիմնադրման մասին համաձայնագրի 20-րդ հոդվածի համաձայն՝ Բանկը ստեղծել է «Արեւելյան Եվրոպայի էներգաարդյունավետության եւ շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամ» (**Հիմնադրամ**), որը կառավարվում եւ գործում է Արեւելյան Եվրոպայի էներգաարդյունավետության եւ շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի՝ 2014 թվականի հուլիսի 23-ի կանոններին

համապատասխան (2019 թվականի մարտի 11-ի փոփոխությամբ), որոնք ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխության ենթարկվել (**Հիմնադրամի կանոններ**):

Ը) Հիմնադրամի կանոններով սահմանված պայմանների համաձայն՝ ՎՋԵԲ-ը դոնորների (**Ներդրող(ներ)**) հետ կնքել է ներդրումների վերաբերյալ համաձայնագրեր (**Ներդրումային համաձայնագրեր**), որոնցով Ներդրողները համաձայնել են ներդրումներ կատարել եւ միջոցներ փոխանցել Հիմնադրամ:

Թ) Հիմնադրամի կանոններով սահմանված պայմանների համաձայն՝ Բանկը համաձայնել է Հիմնադրամի ռեսուրսներից Ծրագրի իրականացման կազմակերպությանը 5 000 000 (հինգ միլիոն) եվրոն չգերազանցող գումարի չափով դրամաշնորհ տրամադրել Ծրագրի հետ կապված որոշակի ապրանքների ու աշխատանքների եւ դրանց հետ կապված ծառայությունների գնման նպատակով՝ սույն Համաձայնագրով սահմանված պայմաններին համապատասխան:

Կողմերը, **ՀԵՏԵՎԱԲԱՐ**, համաձայնում են հետեւյալի մասին.

## **ՀՈԴՎԱԾ I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ**

### **Բաժին 1.01 Սահմանումներ**

Սույն Համաձայնագրում (ներառյալ՝ Ներածությունը, առդիրները եւ հավելվածները) մեծատառերով գրված բառերն ու արտահայտությունները, որոնք, սակայն, այստեղ սահմանված չեն, սույն Համաձայնագրում գործածվում են նույն իմաստով, ինչ Վարկային համաձայնագրում, Ծրագրի համաձայնագրում, Ծրագրի աջակցության համաձայնագրում եւ/կամ Ստանդարտ պայմաններում (ներառյալ այն դեպքերում, երբ Ստանդարտ պայմաններով սահմանված

տերմինները փոփոխության են ենթարկվել Վարկային համաձայնագրում):

Սույն Համաձայնագրում (ներառյալ՝ Ներածությունը, առդիրներն ու հավելվածները) գործածվելիս, եթե համատեքստից այլ բան չի ենթադրվում, ներքոնշյալ տերմիններն արտահայտում են հետեւյալ իմաստները.

**Բանկի հիմնադրման մասին համաձայնագիր՝** ունի Դեկլարատիվ դրույթ Ա-ում սահմանված իմաստը:

**Բացառությունների մասով տվյալների կենտրոնական բազա՝** նշանակում է բոլոր այն իրավաբանական եւ ֆիզիկական անձանց մասով տվյալների բազա, որոնց համար բացառված է ԵՄ ֆինանսավորում ստանալու հնարավորությունը: Ստեղծվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից «Բացառությունների մասով տվյալների կենտրոնական բազայի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1302/2008 կանոնակարգով (ԵՀ, Եվրատոմ) (OJ L 344/12, 20.12.2008):

**Պայմանագրեր՝** նշանակում է Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեռով եւ բովանդակությամբ Ծրագրի իրականացման կազմակերպության եւ կապալառուների միջեւ գործող կամ ապագա պայմանագրերը, որոնք կնքվում են Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ եւ հարակից ծառայություններ, այդ թվում՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաներ գնելու նպատակով եւ պետք է ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվեն Դրամաշնորհի միջոցներից:

**Կապալառուներ՝** նշանակում է վստահելի եւ լավ համբավ ունեցող կապալառուներ, որոնց Ծրագրի իրականացման կազմակերպությունը ներգրավում է Ծրագրի համար

ապրանքների, աշխատանքների եւ հարակից ծառայությունների, ներառյալ՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաներ գնելու նպատակով, եւ յուրաքանչյուր այդպիսի կապալառու պետք է ընտրվի Բաժին 3.06-ի (*Գնումներ*) համաձայն:

**Ներդրումային համաձայնագրեր՝** ունի Դեկլարատիվ դրույթ Ը-ում սահմանված իմաստը:

**Ներդրող(ներ)՝** ունի Դեկլարատիվ դրույթ Ը-ում սահմանված իմաստը:

**Միջոցների հատկացում՝** նշանակում է ժամանակ առ ժամանակ Դրամաշնորհի միջոցների որեւէ մասնաբաժնի հատկացում՝ համաձայն սույն Համաձայնագրի Բաժին 2.02-ի (*Միջոցների հատկացում*):

**Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝** նշանակում է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ համաձայն սույն Համաձայնագրի Բաժին 7.01-ի (*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը*):

**Հիմնադրամ՝** հասկացությունն ունի Դեկլարատիվ դրույթ Է-ում սահմանված իմաստը:

**Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող Պարագաներ՝** նշանակում է Ծրագրի համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները եւ հարակից ծառայությունները, որոնք պետք է ֆինանսավորվեն Դրամաշնորհի միջոցներից, ինչպես ներկայացված է ստորել՝ սույն Համաձայնագրի Հավելված 1-ում (*Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաներ*):

**Դրամաշնորհի միջոցներ՝** տերմինն ունի սույն Համաձայնագրի Բաժին 2.01(ա)-ում սահմանված իմաստը:



**Իրականացման համաձայնագիր՝** հասկացությունն ունի Դեկլարատիվ դրույթ Դ-ում սահմանված իմաստը:

**Դրամաշնորհի միջոցների հասանելիության վերջնաժամկետը՝** նշանակում է այն ամսաթիվը, որը նշված է սույն Համաձայնագրի Բաժին 2.02(ա)-ում *(Դրամաշնորհի միջոցների հասանելիության վերջնաժամկետը):*

**Վարկային համաձայնագիր՝** հասկացությունն ունի Դեկլարատիվ դրույթ Գ-ում սահմանված իմաստը:

**Վարկային միջոցներ՝** նշանակում է միջոցներ, որոնք Վարկային համաձայնագրի շրջանակներում տրամադրվել կամ տրամադրվելու են Բանկի կողմից Պետությանը՝ որպես Վարկառուի, եւ փոխանցմամբ՝ Ծրագրի իրականացման կազմակերպությանը՝ Իրականացման համաձայնագրի պայմաններին համապատասխան:

**Գնումների պլան՝** նշանակում է Ծրագրի գնումների պլանը, ինչպես այն սահմանված է Ծրագրի համաձայնագրում:

**Ծրագիր՝** հասկացությունն ունի Դեկլարատիվ դրույթ Գ-ում սահմանված իմաստը:

**Ծրագրի համաձայնագիր՝** հասկացությունն ունի Դեկլարատիվ դրույթ Ե-ում իրեն վերագրված իմաստը:

**Ծրագրի ավարտի ամսաթիվ՝** նշանակում է այն ամսաթիվը, երբ իրականացվել են հետեւյալ գործողությունները.

ա) Ծրագրի իրականացման կազմակերպությունը Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեւով եւ բովանդակությամբ Բանկին է փոխանցել Ծրագրի ավարտը հավաստող ծանուցումը, եւ

բ) Բանկը Ծրագրի իրականացման կազմակերպությանը փոխանցել է ծանուցում առ այն, որ Բանկը բավարարված է Ծրագրի ավարտի փաստով:

**Ծրագրի իրականացման կազմակերպության լիազորված ներկայացուցիչ՝**  
նշանակում է Ծրագրի իրականացման կազմակերպության տնօրեն:

**Ծրագրի աջակցության համաձայնագիր՝** հասկացությունն ունի Դեկլարատիվ դրույթ Զ-ում սահմանված իմաստը:

**Փոխհատուցման պարտավորություն՝** նշանակում է սույն Համաձայնագրի Բաժին 2.03-ում (*Փոխհատուցման պայմանական եւ ոչ պայմանական պարտավորություններ*) նշված պարտավորությունները, եւ իրենից կարող է ներկայացնել «Փոխհատուցման պայմանական պարտավորություն» կամ «Փոխհատուցման ոչ պայմանական պարտավորություն» այնպես, ինչպես այդ տերմինները կիրառվում են տվյալ բաժնում:

**Հիմնադրամի կանոններ՝** հասկացությունն ունի Դեկլարատիվ դրույթ Է-ում սահմանված իմաստը:

**Պետության լիազոր ներկայացուցիչ՝** նշանակում է Վարկառուի Ֆինանսների նախարարը:

**Ստանդարտ պայմաններ՝** նշանակում է Բանկի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ պայմանները:

## **Բաժին 1.02 Մեկնաբանում**

Սույն Համաձայնագրում՝

ա) եզակի թվով գործածված բառերը ներառում են հոգնակին եւ հակառակը, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում.

բ) վերնագրերն ու բովանդակությունը միայն հղում կատարելու նպատակով հարմարավետության համար են եւ չպետք է ազդեն սույն Համաձայնագրի մեկնաբանման վրա.

գ) անձ մատնանշող բառերը ներառում են կազմակերպությունները, գործընկերությունները եւ այլ իրավաբանական անձինք, իսկ որեւէ անձի արվող հղումները ներառում են նրա իրավահաջորդներին եւ թույլատրված իրավատերերին. եւ

դ) Հոդվածին, Բաժնին, Հավելվածին կամ Առդիրին արվող կոնկրետ հղումը, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Համաձայնագրով այլ բան է սահմանված, պետք է դիտարկվի որպես սույն Համաձայնագրի տվյալ Հոդվածին, Բաժնին, Հավելվածին կամ Առդիրին արվող հղում:

## **ՀՈՂՎԱԾ II. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

### **Բաժին 2.01 Գումար, արժույթ եւ նպատակ**

ա) Սույն Համաձայնագրին համապատասխան՝ Բանկը համաձայնում է Պետությանը Հիմնադրամից տրամադրել դրամաշնորհ՝ 5 000 000 (հինգ միլիոն) եվրո գումարի չափով (**Դրամաշնորհի միջոցներ**):

բ) Դրամաշնորհի միջոցները պետք է օգտագործվեն բացառապես Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաներ ձեռք բերելու նպատակով, որոնք պետք է գնվեն սույն Համաձայնագրի Բաժին 3.06-ին (*Գնումներ*) համապատասխան:

գ) Հաշվի առնելով սույն Համաձայնագրի Բաժին 5.05-ը (*Փոխհատուցման պարտավորություն առաջացնող հանգամանքները*)՝ Դրամաշնորհի միջոցները

փոխհատուցման ենթակա չեն:

դ) Միանշանակ գիտակցվում է եւ ընդունվում, որ Բանկը պարտավորված չէ կատարել Միջոցների հատկացում կամ որեւէ այլ վճարում՝ ըստ սույն Համաձայնագրի կամ դրան համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի Միջոցների հատկացման կամ այդպիսի վճարումների հետ կապված եւ դրանց համարժեք գումարը առկա է Հիմնադրամում՝ տվյալ նպատակի համար:

ե) Եթե Բանկի կողմից այլ բան նախատեսված չէ, ապա՝

1) Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաները պետք է համաֆինանսավորվեն Դրամաշնորհի միջոցների եւ Վարկային միջոցների հաշվին՝ Գնումների պլանում նախատեսվող համամասնությամբ եւ չափերով, եւ

2) Դրամաշնորհի միջոցների գումարը, որը Գնումների պլանի համաձայն բաշխվում է Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող որոշակի պարագաների գնման համար, ցանկացած պահի չպետք է գերազանցի պայմանագրի արժեքի 20 տոկոսը՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող նշված պարագաների մասով:

## **Բաժին 2.02 Միջոցների հատկացում**

Հաշվի առնելով սույն Համաձայնագրի Բաժին 5.01-ը (*Կասեցում*), Բաժին 5.02-ը (*Բանկի կողմից չեղարկումը*) եւ Բաժին 7.02-ը (*Ուժի մեջ մտնելու նախապայմանները*)՝ Բանկի կողմից Դրամաշնորհի միջոցները պետք է ժամանակ առ ժամանակ հատկացվեն մեկ կամ մի քանի հատկացումներով՝ հաշվի առնելով հետեւյալ դրույթները.

### **ա) Դրամաշնորհի միջոցների հասանելիության վերջնաժամկետը**

Պետության՝ սույն Համաձայնագրի համաձայն Միջոցների հատկացման

հայտ ներկայացնելու իրավունքը գործում է Ուժի մեջ մտնելու ամսաթվից եւ դադարում է հետեւյալ իրադարձություններից ավելի վաղ տեղի ունեցած իրադարձության ամսաթվին՝ (i) սույն Համաձայնագրի կնքման ամսաթվի երրորդ տարին լրանալիս, կամ (ii) 2029 թվականի հոկտեմբերի 31-ին (**Դրամաշնորհի միջոցների հասանելիության վերջնաժամկետ**)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը համաձայնում է դադարեցման ավելի ուշ ամսաթվի եւ երկարացման մասին գրավոր ծանուցում է ներկայացնում Պետություն:

**բ) Թույլատրելի ծախսեր**

Եթե Բանկն այլ բան չի սահմանում, ապա Միջոցների հատկացում պետք է կատարվի միայն ներքոնշյալի ֆինանսավորման համար.

- 1) Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների ողջամիտ արժեքների մասով արված ծախսեր (կամ Բանկի կողմից համաձայնելու դեպքում՝ ապագայում արվող ծախսեր), եւ
- 2) սույն Համաձայնագրի կնքման ամսաթվից հետո կրած ծախսեր:

**գ) Միջոցների հատկացման պայմանները**

Առանց սահմանափակելու սույն Համաձայնագրի Բաժին 2.02-ի ընդհանուր բնույթը՝ սույն Համաձայնագրին համապատասխան Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող մեկ կամ մի քանի պարագաների մասով Միջոցների որեւէ հատկացում կարող է արվել, կամ Բանկի բացառիկ հայեցողությամբ դրանից կարելի է հրաժարվել ամբողջությամբ կամ մասամբ, ինչպես նաեւ պայմանավորված կամ չպայմանավորված այն հանգամանքով, որ Պետության կողմից այդպիսի Միջոցների հատկացման հայտ ներկայացնելու ամսաթվին՝

- 1) Բանկը, Վարկային համաձայնագրին համապատասխան, միաժամանակ ստացել է Մասհանման վերաբերյալ համապատասխան հայտ՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող նույն պարագաների մասով ընդհանուր ծախսերի առնվազն 80%-ի (ութսուն տոկոսի) չափով, որոնք պետք է հավաքականորեն ֆինանսավորվեն

Միջոցների հատկացման եւ զուգընթաց արվող Մասհանման հաշվին, կամ

2) Վարկային միջոցների գումարը, որը մասհանվել է, կամ որի մասով Պետության՝ որպես Վարկառուի կողմից հայտ է ներկայացվել Մասհանման վերաբերյալ համապատասխան դիմումով, առնվազն հավասար է այն Դրամաշնորհի միջոցներին, որոնք հատկացվել, կամ որի մասով Պետության կողմից Միջոցների հատկացման վերաբերյալ համապատասխան դիմումով հայտ է ներկայացվել Վարկային համաձայնագրին համապատասխան, կամ

3) Գնումների պլանի համաձայն Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող նույն պարագաների ձեռքբերման նպատակով հատկացված Վարկային միջոցների ամբողջ գումարը մասհանվել է, կամ Մասհանման վերաբերյալ համապատասխան դիմումով այդպիսի հայտ է ներկայացվել Վարկային համաձայնագրին համապատասխան:

**դ) Միջոցների հատկացման հայտ**

1) Պետությունը կարող է Միջոցների հատկացման հայտ ներկայացնել՝ Բանկին ներկայացնելով Միջոցների հատկացման այդպիսի դիմումի բնօրինակը՝ ստորագրված Պետության լիազոր ներկայացուցչի կամ Պետության լիազոր ներկայացուցչի կողմից նշանակված անձի կողմից: Միջոցների հատկացման հայտը պետք է կազմվի Առդիր 1-ում (*Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշ*) ներկայացված ձեւով եւ պետք է Բանկ ներկայացվի Միջոցների հատկացման այդպիսի առաջարկվող ամսաթվից առնվազն տասնհինգ (15) Աշխատանքային օր առաջ: Եթե Բանկը այլ բան չի սահմանում, ապա այդպիսի հայտն անհետկանչելի է եւ ունի պարտադիր ուժ Պետության համար:

2) Միջոցների հատկացման յուրաքանչյուր հայտ պետք է ուղեկցվի այնպիսի փաստաթղթերով եւ այլ ապացույցներով, որոնք ձեւով եւ

բովանդակությամբ Բանկի կողմից դիտարկվում են որպես բավարար առ այն, որ Պետությունն իրավունք ունի ստանալու այդ Միջոցների հատկացման գումարը, եւ որ այն կօգտագործվի բացառապես Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների համար: Այդպիսի փաստաթղթերը պետք է ներառեն հետեւյալը, սակայն չսահմանափակվեն դրանով՝ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից կամ անունից վավերացված՝ Կապալառուի հաշիվ-ապրանքագիրը (ապրանքագրերը) (եթե այդպես է պահանջվում համապատասխան Պայմանագրով)՝ փաստացի հաշիվ-ապրանքագրի տեսքով կամ առանձին տեղեկանքի ձեւով, որում պետք է նշվի Ծրագրի իրականացման կազմակերպության հաստատումը առ այն, որ ապրանքները, աշխատանքները կամ ծառայությունները բավարար կերպով են առաքվել կամ իրականացվել՝ սույն Համաձայնագրի եւ համապատասխան Պայմանագրի պահանջներին համապատասխան:

**ե) Միջոցների հատկացման արժույթը**

Հատկացումներն արվում են եվրոյով՝ այն չափով, որը հավասար կամ համարժեք է Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող ծախսերին: Եվրոյից բացի որեւէ այլ արժույթով կամ արժույթներով արված ծախսերի դեպքում Միջոցների հատկացման համարժեք գումարը որոշվում է հետեւյալ կերպ՝

- 1) եթե Պետությունը հայտ է ներկայացնում վճարումը եվրոյով ստանալու համար, ապա Բանկը պետք է հաշվարկի Միջոցների հատկացման գումարը՝ փոխարժեքի մասով ծախսերի հիման վրա, որը Բանկը կկրեր, եթե գներ այդ արժույթը կամ արժույթները՝ հայտը բավարարելու նպատակով.
- 2) եթե Պետությունը հայտ է ներկայացնում վճարումը կատարված ծախսերի արժույթով կամ արտարժույթներով ստանալու համար, ապա Բանկը՝ պայմանով, որ այդ ծախսերը հասանելի արժույթով կամ արժույթներով են արվել, կգնի այդպիսի արժույթը կամ արժույթներն

այնպես, ինչպես Բանկը նպատակահարմար կհամարի: Միջոցների հատկացման համարժեք գումարը որոշվում է Բանկի կողմից փոխարկման այն ծախսերի հիման վրա, որոնք արվել են կամ կարող էին արվել Բանկի կողմից հայտը բավարարելու նպատակով եվրո կիրառելիս:

**զ) Այլ արժույթներով արվող վճարումներ**

Բացառիկ հանգամանքներում Բանկը կարող է բավարարել վճարումը ոչ թե եվրոյով կամ ծախսերի արժույթով, այլ մեկ ուրիշ արժույթով կամ արժույթներով կատարելու վերաբերյալ Պետության հայտը: Այդ դեպքում Բանկը կգնի այդ արժույթը կամ արժույթները Բանկին հարմար եղանակով: Միջոցների հատկացման համարժեք գումարը որոշում է Բանկը՝ փոխարկման մասով ծախսերի հիման վրա, որոնք արվել են կամ կարող էին արվել Բանկի կողմից հայտը բավարարելու նպատակով եվրո կիրառելիս:

**է) Միջոցների հատկացման նվազագույն գումարը**

Բացի Միջոցների վերջին հատկացումից կամ Բանկի կողմից այլ բան սահմանելու դեպքում, Միջոցների հատկացումը պետք է արվի ոչ պակաս, քան 50 000 (հիսուն հազար) եվրո գումարի չափով:

**Բաժին 2.03 Փոխհատուցման պայմանական եւ ոչ պայմանական պարտավորություններ**

ա) Պետության հայտի հիման վրա՝ Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեռով եւ բովանդակությամբ Բանկը կարող է ՎՋԵԲ-ի «Միջոցների հատկացման ձեռնարկ» -ի կիրառելի դրույթների համաձայն, *mutatis mutandis* [համապատասխան փոփոխություններով], ստանձնել Փոխհատուցման պայմանական կամ ոչ պայմանական պարտավորություններ՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող ծախսերի հետ կապված բանկերի կողմից ակրեդիտիվների հիման վրա կատարված վճարումները փոխհատուցելու համար:



Այդպիսի յուրաքանչյուր փոխհատուցում Միջոցների հատկացում է:

բ) Փոխհատուցման պայմանական պարտավորության դեպքում Բանկի կողմից վճարելու պարտավորությունն անմիջապես կասեցվում կամ դադարեցվում է Բանկի կողմից սույն Համաձայնագրի Բաժին 5.01-ի (*Կասեցում*) կամ Բաժին 5.02-ի (*Չեղարկում*) համաձայն Դրամաշնորհի միջոցների կասեցման կամ չեղարկման դեպքում:

գ) Փոխհատուցման ոչ պայմանական պարտավորության դեպքում Բանկի կողմից վճարելու պարտավորությունը պայմանավորված չէ Դրամաշնորհի միջոցների որեւէ հետագա կասեցմամբ կամ չեղարկմամբ:

#### **Բաժին 2.04 Վերաբաշխում**

Պետությունը կարող է խնդրել Բանկին վերաբաշխել գումարները, որոնք հատկացվել են սույն Համաձայնագրի Հավելված 1-ում նկարագրված՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող յուրաքանչյուր պարագայի համար՝ պայմանով, որ այդ վերաբաշխումը համապատասխանում է Հիմնադրամի կանոններին: Բանկը կարող է բավարարել վերաբաշխում կատարելու խնդրանքը՝ այդ մասին ծանուցելով Պետությանը: Այդպիսի վերաբաշխումն ուժի մեջ է մտնում, երբ տրվում է ծանուցումը:

#### **Բաժին 2.05 Պետության կողմից չեղարկում**

Պետությունը կարող է ցանկացած ժամանակ՝ ոչ պակաս, քան երեսուն (30) Աշխատանքային օր առաջ Բանկին գրավոր ծանուցում ներկայացնելուց հետո, ամբողջովին կամ մասամբ չեղարկել Դրամաշնորհի միջոցների ցանկացած չհատկացված մասնաբաժին: Չեղարկման մասին որեւէ այդպիսի ծանուցում անհետկանչելի է եւ պարտադիր Պետության համար:

#### **Բաժին 2.06 Վճարումներ**

ա) Եթե Բանկն այլ բան չի սահմանում, ապա սույն Համաձայնագրին համապատասխան Բանկի կողմից հատկացվող գումարները պետք է փոխանցվեն անմիջապես համապատասխան Կապալառուի բանկային հաշվին, ինչպես Պետությունը նշում է իր՝ Միջոցների հատկացման վերաբերյալ հայտում: Բանկը պետք է վճարումներ կատարի միայն էլեկտրոնային վճարման միջոցով, Կապալառուի անունով պահվող բանկային հաշվին, որը գտնվում է Կապալառուի հիմնադրման կամ մշտական բնակության վայրում, ըստ կիրառելիության, կամ (Բանկի նախապես տրված համաձայնությամբ) այն երկրում, որտեղ Կապալառուն մատակարարում է ապրանքները կամ կատարում աշխատանքները, կամ որտեղ Կապալառուն մատուցում է ծառայությունները:

բ) Եթե սույն Համաձայնագրով նախատեսված որեւէ վճարման ժամկետը որեւէ կերպ համընկնում է ոչ Աշխատանքային օրվա հետ, ապա այդ դեպքում վճարումը պետք է կատարվի հաջորդ Աշխատանքային օրը:

գ) Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Բանկին վճարման ենթակա ցանկացած գումար պետք է վճարվի առանց հաշվանցման կամ հակադարձ հայտի, եվրոյով, նշանակված ամսաթվին, Լոնդոնում, Անգլիայում կամ մեկ այլ վայրում գտնվող հաշվին, ինչպես Բանկը ժամանակ առ ժամանակ կնշի Պետությանն ուղարկված ծանուցման մեջ:

### **ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

#### **Բաժին 3.01 Համագործակցություն եւ տեղեկատվություն**

ա) Ստանդարտ պայմանների Բաժին 4.01-ի (*Համագործակցություն եւ Տեղեկատվություն*) դրույթները պետք է կիրառվեն այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ համապատասխան փոփոխություններով՝ չսահմանափակելով դրանց ընդհանուր բնույթն այնպես, որ՝

i) «Վարկառու» -ին եւ «Երաշխավոր» -ին արվող հղումներն

ընդունվեն որպես «Պետությանն» արվող հղումներ,

ii) «Վարկ» -ին արվող հղումներն ընդունվեն որպես «Դրամաշնորհի միջոցներ» -ին արվող հղումներ, եւ

iii) «Վարկային համաձայնագրին» եւ «Ծրագրի համաձայնագրին» արվող հղումներն ընդունվեն որպես «սույն Համաձայնագրին» արվող հղումներ:

բ) Վարկային համաձայնագրին, Ծրագրի համաձայնագրին եւ (կամ) Ծրագրի աջակցության համաձայնագրին համապատասխան տեղեկություններ ստանալով՝ Բանկը կարող է օգտագործել եւ հիմնվել այդպիսի տեղեկությունների վրա որպես սույն Համաձայնագրի շրջանակներում Դրամաշնորհի միջոցներ տրամադրող:

### **Բաժին 3.02 Ծրագրի իրականացման հետ կապված պարտականություններ**

ա) Եթե Բանկն այլ բան չի սահմանել, ապա Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է՝

1) իրականացնի Ծրագիրը պատշաճ ջանասիրությամբ ու արդյունավետությամբ՝ Ծրագրի համաձայնագրին եւ սույն Համաձայնագրին համապատասխան,

2) իրականացնի Ծրագիրը Գնումների պլանի համաձայն, որը Բանկի կողմից գրավոր համաձայնության դեպքում ենթակա է ցանկացած փոփոխությունների,

3) իրականացնի Ծրագիրը՝ համաձայն Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների պլանի եւ ՎՋԵԲ-ի՝ Գործունեության սահմանված պահանջների,

4) այնպես կազմակերպի, որ Ծրագրի ավարտի ամսաթիվը լինի ոչ

ուշ, քան 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, եւ

5) ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ Ծրագրի հաջող ավարտն ապահովելու համար:

բ) Ստանդարտ պայմանների Բաժին 4.02-ի (*Ծրագրի իրականացմանը վերաբերող պարտականություններ*) դրույթները կիրառվում են այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ շարադրված լինեին այստեղ համապատասխան փոփոխություններով՝ չսահմանափակելով դրանց ընդհանուր բնույթն այնպես, որ՝

i) «Վարկառու» -ին արվող հղումներն ընդունվեն որպես «Պետությանն» արվող հղումներ, եւ

ii) «Վարկի գումար»-ին արվող հղումներն ընդունվեն որպես «Դրամաշնորհի միջոցների գումարին» արվող հղումներ:

գ) Ծրագրի ավարտի ամսաթվին կամ սույն Դրամաշնորհային համաձայնագրի դադարեցման պահից՝ նայած որն է տեղի ունենում շուտ, Պետությունը պետք է ապահովի, որ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների նկատմամբ սեփականության իրավունքը (դրանք գնելուց հետո) փոխանցվի Քաղաքապետարանին կամ Ծրագրի իրականացման կազմակերպությանը, եւ եթե կիրառելի է, պետք է պահի դրանց նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթային ապացույցը:

դ) Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որը կարող է շահերի բախման պատճառ դառնալ: Շահերի բախումն առկա է, երբ խախտվում է սույն Դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում Պետության գործառույթների անկողմնակալ եւ օբյեկտիվ իրականացումը:

**Բաժին 3.03 Բնապահպանական եւ սոցիալական նորմերին համապատասխանություն**

Եթե Բանկն այլ բան չի սահմանել, ապա Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է ապահովի, որ Ծրագրի այն մասը, որը

Ֆինանսավորվում է Դրամաշնորհի միջոցներով, իրականացվի Ծրագրի համաձայնագրի Բաժին 2.05-ի (Բնապահպանական եւ սոցիալական նորմերին համապատասխանության վերաբերյալ դրույթներ) համաձայն:

### **Բաժին 3.04 Պետության՝ աջակցելու պարտավորությունը**

ա) Պետությունը չպետք է ձեռնարկի որեւէ գործողություն եւ չպետք է թույլ տա իր որեւէ գործակալի կամ դուստր ընկերության՝ ձեռնարկել որեւէ գործողություն, որը կխոչընդոտի կամ կմիջամտի Ծրագրի իրականացմանը կամ Ծրագրի նյութատեխնիկական օբյեկտների արդյունավետ շահագործմանը, կամ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից սույն Համաձայնագրին համապատասխան իր պարտավորությունների կատարմանը: Պետությունը նաեւ ապահովում է, որ այդպիսի գործողություններ չեն ձեռնարկվի կամ չեն թույլատրվի իր որեւէ քաղաքական կամ վարչական ստորաբաժանման կամ Պետությանը պատկանող եւ նրա կողմից վերահսկվող կամ Պետության կամ այդ ստորաբաժանումների ներքո կամ ի շահ դրանց գործող սուբյեկտների կողմից:

բ) Եթե Բանկն այլ բան չի սահմանում, ապա Պետությունը պետք է՝

1) պատշաճ կերպով կատարի սույն Համաձայնագրով եւ Վարկային համաձայնագրով սահմանված իր բոլոր պարտավորությունները,

2) եթե կիրառելի և ընդունելի է Պետության համար, աջակցի Ծրագրի իրականացման կազմակերպությանը կատարել սույն Համաձայնագրով սահմանված իր պարտականությունները, այդ թվում՝ ձեռնարկելով բոլոր օրենսդրական, կարգավորող կամ այլ անհրաժեշտ կամ ցանկալի գործողություններ եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը հատկացնելով եւ նրան ապահովելով կամ կազմակերպելով, որ ապահովվի աջակցությամբ Ծրագիրն ավարտին հասցնելու նպատակով՝ Ծրագրի իրականացման կազմակերպության համար այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում, եւ

3) կատարման ներկայացնի ցանկացած այլ փաստաթուղթ եւ ձեռնարկի ցանկացած այլ միջոց, որոնք Բանկը համարում է անհրաժեշտ եւ ցանկալի՝ սույն Համաձայնագրի գործողության համար:

գ) Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը, ըստ անհրաժեշտության, պետք է ապահովեն անձնական տվյալների պատշաճ պաշտպանություն, *inter alia* [ի թիվս այլնի], իր համապատասխան կանոնակարգերի եւ կանոնների համաձայն ձեռնարկելով անվտանգության տեխնիկական եւ կազմակերպչական պատշաճ միջոցառումներ՝ ցանկացած այդպիսի գործառնության եւ ֆիզիկական անձին վերաբերող տեղեկությունների բնույթի հետ կապված ռիսկերի առնչությամբ՝ նպատակ ունենալով՝

1) կանխել ցանկացած չարտոնված անձի մուտքն այդպիսի գործառնություններ կատարող համակարգչային համակարգեր եւ հատկապես՝ չարտոնված ընթերցումը, պատճենումը, փոփոխումը կամ պահեստավորման կրիչներից հեռացումը. սա ներառում է տվյալների չարտոնված մուտքագրում, ինչպես նաեւ պահվող տեղեկությունների ցանկացած չարտոնված հանրայնացում, փոփոխում կամ ջնջում.

2) ապահովել, որ նշված գործողություններ իրականացնող՝ SS համակարգի լիազորված օգտատերերը կարող են միայն այն տեղեկություններին հասանելիություն ունենալ, որոնց մասով նրանք ունեն մուտքի իրավունք. եւ

3) նախագծել իր կազմակերպական կառուցվածքն այնպես, որ այն համապատասխանի վերը նշված պահանջներին:

դ) Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը, ըստ կիրառության, գիտակցում են եւ համաձայն են, որ (i) Բանկը պարտավոր է տեղեկացնել Եվրոպական Միությանը, եթե Ծրագրի իրականացման հետ կապված հայտնաբերի, որ Պետության կամ վերջինիս նկատմամբ ներկայացուցչության, որոշումներ կայացնելու կամ վերահսկողության լիազորություններ ունեցող անձանց մասով վճիռ է կայացվել, որն ունի *res judicata*

[իրավական ուժ]՝ խարդախության, կոռուպցիայի, հանցավոր կազմակերպությունում ներգրավվածության, փողերի լվացման կամ Եվրոպական Միության ֆինանսական շահերին վնասող որեւէ այլ անօրինական գործողության մասով, եւ (ii) Եվրոպական Միությունը կարող է այդ տեղեկությունները մուտքագրել Բացառությունների մասով տվյալների կենտրոնական բազա:

### **Բաժին 3.05 Ծրագրի իրականացման գրասենյակը**

Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է ապահովի, որ Ծրագրի համաձայնագրի Բաժին 2.03-ում (*Ծրագրի իրականացման գրասենյակը*) նշված ԾԻԳ-ի գործունեությունն ու պարտավորությունները ներառեն Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների գնումը եւ Դրամաշնորհի միջոցների իրականացումը:

### **Բաժին 3.06 Գնումներ**

ա) Եթե Բանկն այլ բան չի սահմանել, ապա Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների գնումները պետք է իրականացվեն ՎՋԵԲ-ի՝ Գնումների վերաբերյալ կանոնների համաձայն: Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների գնումն իրականացվում է բաց մրցույթով եւ (կամ) պարզեցված բաց մրցույթով՝ ՎՋԵԲ-ի՝ Գնումների վերաբերյալ կանոնների III-րդ բաժնի 3-րդ հոդվածի դրույթների համաձայն:

բ) Բոլոր Պայմանագրերը ենթակա են նախնական ստուգման ընթացակարգերի, որոնք սահմանված են ՎՋԵԲ-ի՝ Գնումների վերաբերյալ կանոններում:

### **Բաժին 3.07 Ծրագրի վերաբերյալ գրառումները եւ հաշվետվությունները.ստուգումներ**

ա) Ծրագրի իրականացման կազմակերպությունը պարտավոր է

ապահովել, որ Բանկին տրամադրվող տեղեկությունները եւ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից արվող գրառումները, Ծրագրի համաձայնագրի Բաժին 2.06-ի (*Հաշվետվությունների հաճախականությունը եւ ներկայացման պահանջները*), ինչպես նաեւ Ստանդարտ պայմանների Բաժին 4.04-ի (*Ծրագրի վերաբերյալ գրառումները եւ հաշվետվությունները*) եւ Բաժին 5.02-ի (*Հաշվետվություններ*) պահանջների համաձայն՝

1) ներառեն մանրամասն տեղեկություններ՝ Պայմանագրերի, Կապալառուների, Միջոցների հատկացման, Դրամաշնորհի միջոցների եւ դրանց օգտագործման ու Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների, ինչպես նաեւ սույն Համաձայնագրում եղած բոլոր վավերապայմաններին համապատասխանության վերաբերյալ՝ Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեւով ու բովանդակությամբ.

2) պարունակեն բավարար տեղեկություններ՝ տարանջատելու համար Դրամաշնորհի միջոցները Վարկային միջոցներից. եւ

3) ներառեն այնպիսի այլ տեղեկություններ, ի թիվս այլնի, Ծրագրի իրականացման կազմակերպության, Ծրագրի եւ սույն Համաձայնագրով դիտարկվող գործարքների վերաբերյալ, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

բ) Հնարավորինս շուտ, սակայն ամեն դեպքում՝ վերջին Պայմանագրի ավարտին հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում, Ծրագրի իրականացման կազմակերպությունը պարտավոր է Բանկ ներկայացնել (Բանկի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում՝ Ծրագրի իրականացման կազմակերպության լիազորված ներկայացուցչի կողմից հաստատմամբ) եզրափակիչ հաշվետվություն՝ Դրամաշնորհի միջոցների օգտագործման վերաբերյալ, որում պետք է մանրամասն նշվեն բոլոր Պայմանագրերը, բոլոր Կապալառուները, Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաները, առաքման ու



մոնտաժման գրաֆիկները, ինչպես նաև նախնական կանխատեսումների հետ համեմատությունը:

գ) Հնարավորինս շուտ, սակայն ամեն դեպքում՝ Ծրագրի ավարտի ամսաթվին հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում, Ծրագրի իրականացման կազմակերպությունը պարտավոր է Բանկ ներկայացնել (Բանկի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում՝ Ծրագրի իրականացման կազմակերպության լիազորված ներկայացուցչի կողմից հաստատմամբ) Ծրագրի վերաբերյալ եզրափակիչ հաշվետվություն՝ ներկայացնելով Դրամաշնորհի միջոցների օգտագործումը:

դ) Բանկի խնդրանքով Ծրագրի իրականացման կազմակերպությունը պարտավոր է հնարավորություն ընձեռել Բանկին եւ նրա ներկայացուցիչներին՝

1) այցելելու Ծրագրին առնչվող ցանկացած օբյեկտներ եւ շինհրապարակներ.

2) ուսումնասիրելու Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող ցանկացած եւ բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ծառայությունները, ինչպես նաև գործարաններ, կայանքներ, վայրեր, աշխատանքներ, շենքեր, գույք, սարքավորումներ, արձանագրություններ եւ փաստաթղթեր, որոնք վերաբերում են սույն Համաձայնագրի շրջանակներում Պետության կողմից իր պարտավորությունների կատարմանը. եւ

3) այդ նպատակով հանդիպելու եւ քննարկումներ ունենալու Ծրագրի իրականացման կազմակերպության այն ներկայացուցիչների եւ աշխատակիցների հետ, ում հետ Բանկն անհրաժեշտ եւ տեղին կհամարի:

ե) Որեւէ Պայմանագիր շնորհելուց հետո Բանկը կարող է հրապարակել դրա նկարագրությունը, Կապալառուի անունը, ազգությունը եւ պայմանագրի գինը:

զ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը պարտավոր է ապահովել, որ Բանկը եւ նրա ներկայացուցիչները հնարավորություն ունենան ուսումնասիրելու Ծրագրի իրականացման կազմակերպության՝ Ծրագրին եւ Դրամաշնորհի միջոցներին վերաբերող հաշվապահական մատյանները եւ գրառումները:

#### **ՀՈԴՎԱԾ IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

##### **Բաժին 4.01 Ֆինանսական գրառումներ եւ հաշվետվություններ**

ա) Դրամաշնորհի միջոցների հետ կապված Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է իրականացնի առանձին հաշվառում եւ հաշիվների վարում՝ Բանկի կողմից ընդունելի եւ հետետողականորեն կիրառվող հաշվապահական ստանդարտների համաձայն:

բ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է ապահովի, որ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Բանկին տրամադրվող տեղեկությունները եւ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից իրականացվող հաշվառումները, համաձայն Ծրագրի իրականացման կազմակերպության պարտավորությունների, որոնք սահմանված են Ծրագրի համաձայնագրի Բաժին 3.01-ում (*Ֆինանսական գրառումներ եւ հաշվետվություններ*), ինչպես նաեւ Ստանդարտ պայմանների Բաժին 5.02(գ)(i)-ում (*Հաշվետվությունները*)՝

- 1) ներառեն մանրամասն տեղեկություններ՝ Դրամաշնորհի միջոցների եւ դրանց օգտագործման մասին՝ Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեւով եւ բովանդակությամբ.
- 2) պարունակեն բավարար տեղեկություններ՝ տարանջատելու համար Դրամաշնորհի միջոցները Վարկային միջոցներից. եւ
- 3) ներառեն այդ հաշվառումներին, հաշիվներին եւ ֆինանսական

հաշվետվություններին վերաբերող այլ տեղեկություններ, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամիտ սահմաններում պահանջել:

գ) Ծրագրի ավարտի ամսաթվից հետո առնվազն հինգ (5) տարվա ընթացքում Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է՝

1) պահպանի Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորված գործունեության հետ կապված ֆինանսական հաշվառման փաստաթղթերը եւ գրառումները. եւ

2) Բանկին ըստ պահանջի տրամադրի բոլոր անհրաժեշտ ֆինանսական տեղեկությունները, ներառյալ՝ Ծրագրի հետ կապված հաշիվների քաղվածքները:

դ) Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը, ըստ կիրառելիության, պետք է Ծրագրի ավարտի ամսաթվից առնվազն հինգ (5) տարվա ընթացքում, կամ եթե ավելի ուշ է ընկնում՝ սույն Դրամաշնորհային պայմանագիրը, Ներդրումային համաձայնագիրը, որեւէ Պայմանագիր կամ Ֆինանսավորման համաձայնագիր կարգավորող գործող օրենքի համաձայն, որեւէ պահանջի վաղեմության ժամկետի ընթացքում՝

1) պահպանի Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվառման փաստաթղթերն ու գրառումները. եւ

2) Բանկին, Հիմնադրամի ներդրողներին, Եվրոպական աուդիտորական դատարանին կամ նրանց լիազոր ներկայացուցիչներին այդպիսի խնդրանք ներկայացնելու դեպքում տրամադրի բոլոր տեղեկությունները, ինչպես նաեւ ցանկացած փաստաթղթի եւ համակարգչային տվյալի հասանելիություն, որոնք վերաբերում են սույն Դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող գործառնությունների տեխնիկական եւ ֆինանսական կառավարմանը, ներառյալ՝ Ծրագրի հետ կապված

հաշիվների քաղվածքները, ինչպես նաև նրանց թույլ տա մուտք գործել օբյեկտներ եւ տարածքներ՝ ճշտումների, գնահատման առաքելությունների եւ (կամ) քննությունների (ներառյալ տեղում ստուգումների) նպատակով՝ կապված Ծրագրի իրականացման հետ այն վայրերում, որտեղ իրականացվում են Ծրագրի հետ կապված գործառնությունները:

#### **Բաժին 4.02 Բիզնեսի վարումը եւ գործառնությունները**

Եթե Բանկն այլ բան չի սահմանել, ապա Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է՝

ա) պարտաճանաչ կերպով կատարի սույն Համաձայնագրով եւ Ծրագրի համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները,

բ) չվճառի, վարձակալությամբ չհանձնի կամ այլ կերպ չօտարի իր հիմնական ակտիվներից որեւէ մեկը, որն անհրաժեշտ է իր գործունեության արդյունավետ իրականացման համար, կամ որոնց օտարումը կարող է վնասել սույն Համաձայնագրով նախատեսված իր որեւէ պարտավորություն բավարար կերպով կատարելու հնարավորությանը,

գ) փոփոխություններ չկատարի կամ թույլ չտա փոփոխություններ կատարել իր Կանոնադրության մեջ, եթե այդպիսի փոփոխությունները չեն համապատասխանում սույն Համաձայնագրի որեւէ դրույթին կամ կարող են խաթարել Ծրագրի իրականացման կազմակերպության՝ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխանելու կարողությունը, եւ

դ) կատարման ներկայացնի ցանկացած այլ փաստաթուղթ եւ ձեռնարկի ցանկացած այլ միջոցառում, որոնք Բանկը կհամարի անհրաժեշտ եւ ցանկալի՝ սույն Համաձայնագրի գործողության համար:

#### **Բաժին 4.03 Հարկեր**

ա) Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է ժամանակին վճարի գանձման եւ վճարման ենթակա բոլոր Հարկերը, կամ սույն Համաձայնագրի (ներառյալ Դրամաշնորհի միջոցների տրամադրման մասով) կամ սույն Համաձայնագրին վերաբերող որեւէ այլ փաստաթղթի կատարման, տրամադրման, առաքման, գրանցման եւ նոտարական վավերացման հետ կապված հարկերը:

բ) Դրամաշնորհի միջոցներից որեւէ գումար չպետք է օգտագործվի ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որեւէ Հարկի վճարման համար՝ անկախ այն բանից՝ այդ հարկն ուղղակի է, թե անուղղակի, առաջանում է Հայաստանի տարածքում, թե այլուր:

#### **Բաժին 4.04 Տեսանելիություն**

Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ հանրայնացնելու այն փաստը, որ Ծրագիրը ֆինանսավորում է ստացել Հիմնադրամից, եւ նշի Հիմնադրամի բոլոր ներդրողներին, ներառյալ՝ Եվրոպական Միությանը: Մամուլին տրամադրվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ դրա հետ կապված բոլոր գովազդային նյութերը, պաշտոնական ծանուցումները, զեկույցներն ու հրապարակումները՝ արված որեւէ եղանակով եւ որեւէ հարթակում, ներառյալ՝ համացանցը, պետք է փաստեն, որ Ծրագիրն իրականացվել է «E5P Հիմնադրամի ֆինանսավորմամբ, որի ամենախոշոր ներդրողը Եվրոպական Միությունն է», թվարկեն բոլոր ներդրողներին եւ համապատասխան կերպով ցուցադրեն Հիմնադրամի տարբերանշանը, ներդրողների տարբերանշանները (ներառյալ՝ ԵՄ-ի տարբերանշանը (տասներկու դեղին աստղ կապույտ ֆոնի վրա)): Ծրագրին վերաբերող հրապարակումները՝ արված որեւէ եղանակով եւ որեւէ հարթակում,

ներառյալ՝ համացանցը, պետք է պարունակեն պատասխանատվությունից հրաժարման հետեւյալ տեքստը. «Այս փաստաթուղթը պատրաստվել է E5P Հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ, որի ներդրողներն են [...] եւ Եվրամիությունը՝ խոշորագույն ներդրողը: Այստեղ արտահայտված տեսակետները ոչ մի կերպ չեն կարող մեկնաբանվել որպես E5P Հիմնադրամի կամ դրա որեւէ ներդրողի պաշտոնական կարծիքն արտացոլող տեսակետներ»:

#### **Բաժին 4.05 Խարդախություն եւ կոռուպցիա**

Ծրագրի իրականացման կազմակերպությունը չպետք է զբաղվի եւ չպետք է լիազորի կամ թույլատրի իր որեւէ ծառայողի, տնօրենի, լիազորված աշխատակցի, գործակալի կամ ներկայացուցչի զբաղվել որեւէ Արգելված գործունեությամբ՝ կապված Ծրագրի, Դրամաշնորհի միջոցների կամ սույն Համաձայնագրով նախատեսված ցանկացած գործարքի հետ:

### **ՀՈԴՎԱԾ V. ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄ. ՀԱՏՈՒՅՈՒՄ**

#### **Բաժին 5.01 Կասեցում**

ա) Հետեւյալ իրադարձություններից որեւէ մեկը տեղի ունենալու եւ շարունակվելու դեպքում Բանկը կարող է Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը ծանուցելուց հետո ամբողջությամբ կամ մասամբ կասեցնել Պետության՝ սույն Համաձայնագրի շրջանակներում այդուհետ Միջոցների հատկացում ստանալու իրավունքը.

- 1) Վարկային համաձայնագիրը, Ծրագրի համաձայնագիրը, Ծրագրի աջակցության համաձայնագիրը կամ Իրականացման համաձայնագիրը կորցնում է ուժը եւ վավերությունը կամ դադարեցվում է,

2) Պետությունը, Քաղաքապետարանը կամ Ծրագրի իրականացման կազմակերպությունը չի կատարել կամ չի կատարում սույն Համաձայնագրի, Վարկային համաձայնագրի, Իրականացման համաձայնագրի, Ծրագրի աջակցության համաձայնագրի կամ Ծրագրի համաձայնագրի շրջանակներում իր պարտավորությունները,

3) ապացուցվել է, որ տեղի է ունեցել այլընտրանքային ֆինանսավորում՝ Ծրագրի ֆինանսավորման համար՝ դրանով իսկ առաջացնելով կրկնակի ֆինանսավորում (ամբողջությամբ կամ մասամբ),

4) Բանկը կասեցրել է, կամ տեղի է ունեցել որեւէ իրադարձություն, որն իրավունք է տալիս Բանկին ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելու Պետության՝ Վարկային համաձայնագրի շրջանակներում որպես Վարկառուի, Մասհանման վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունքը՝ Ստանդարտ պայմանների Բաժին 7.01-ին (*Կասեցում*) կամ Վարկային համաձայնագրի Բաժին 4.01-ին (*Կասեցում*) համապատասխան,

5) Բանկը չեղարկել է, կամ տեղի է ունեցել որեւէ իրադարձություն, որը իրավունք է տալիս Բանկին ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել Վարկային միջոցների տրամադրումը՝ համաձայն Ստանդարտ պայմանների Բաժին 7.02-ի (*Բանկի կողմից չեղարկումը*),

6) Ստանդարտ պայմանների Բաժին 7.06-ում (*Վաղաժամկետ մարման հանգամանքները*) կամ Վարկային համաձայնագրի Բաժին 4.02-ում (*Վարկի վաղաժամկետ մարում*) նշված որեւէ իրադարձություն է տեղի ունեցել կամ շարունակվում է, եւ Բանկը հայտարարել է, որ Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց որեւէ մասը ենթակա է վճարման՝ Ստանդարտ պայմանների Բաժին 7.06-ին (*Վաղաժամկետ մարման հանգամանքները*)

*համապատասխան,*

7) տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում որեւէ արտակարգ իրավիճակ է առաջացել, որն անհնար կդարձնի Ծրագրի իրագործումը կամ Ծրագրի իրականացման կազմակերպության կամ Պետության կողմից իրենց՝ սույն Համաձայնագրի շրջանակներում պարտավորությունների կատարումը, կամ Քաղաքապետարանի կողմից Ծրագրի աջակցության համաձայնագրի շրջանակներում իր պարտավորությունների կատարումը,

8) Ծրագրի իրականացման կազմակերպության կամ Պետության կողմից արված՝ սույն Համաձայնագրին առնչվող, կամ Քաղաքապետարանի կողմից արված՝ Ծրագրի աջակցության համաձայնագրին առնչվող հայտարարությունները սխալ են կամ ապակողմնորոշիչ որեւէ նյութական առումով,

9) Ծրագրի իրականացման կազմակերպության Կանոնադրությունը փոփոխվել, կասեցվել, ուժը կորցրած է ճանաչվել, չեղարկվել կամ չեղյալ է հայտարարվել այնպես, որ դա էականորեն եւ անբարենպաստ կերպով է ազդում Ծրագրի իրականացման կազմակերպության գործառնությունների կամ ֆինանսական վիճակի կամ Ծրագիրն իրականացնելու կամ սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու կարողության վրա,

10) Պետությունը՝ Վարկային Համաձայնագրի շրջանակներում որպես Վարկառու, ամբողջովին կամ մասամբ չեղարկել է Վարկային միջոցների որեւէ չհատկացված մաս՝ համաձայն Ստանդարտ պայմանների Բաժին 3.08-ի (*Չեղարկում*),

11) Հիմնադրամը դադարեցրել է իր գործունեությունը՝ Հիմնադրամի կանոնների համաձայն,

12) համաձայն Կիրարկման քաղաքականության եւ ընթացակարգերի՝



Բանկը որոշել է, որ Պետությունը, Ծրագրի իրականացման կազմակերպությունը, Քաղաքապետարանը, որեւէ Կապալառու, այդ սուբյեկտների կախյալ ձեռնարկություն կամ դրանց որեւէ պաշտոնյա, աշխատակից, գործակալ կամ ներկայացուցիչ Բանկի կողմից ներառվել է այնպիսի անձանց ցուցակում, որոնք իրավասու չեն Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագիր կամ Բանկից ֆինանսավորում ստանալու, եւ այդ ցուցակը կարելի է գտնել Բանկի կայքում,

13) Պետության տարածքում քաղաքային տրանսպորտի ոլորտի նկատմամբ կիրառվող օրենսդրական եւ կարգավորման շրջանակը փոփոխվել, կասեցվել, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչվել այնպես, որ դա էականորեն եւ բացասաբար է ազդում Ծրագրի իրականացման կազմակերպության գործունեության կամ ֆինանսական վիճակի վրա եւ սույն Համաձայնագրով նախատեսված իր որեւէ պարտավորություն կատարելու վրա, կամ

14) Ներդրողները (ինչպես սահմանված է Հիմնադրամի կանոններում) կասեցրել են վճարումները Հիմնադրամին, կամ Հիմնադրամը դադարեցրել է իր գործունեությունը՝ Հիմնադրամի կանոնների համաձայն, կամ դադարեցման մասին ծանուցում է արվել Ներդրումային համաձայնագրերին համապատասխան:

բ) Պետության՝ Միջոցների որեւէ հետագա հատկացում ստանալու իրավունքը շարունակում է ամբողջությամբ կամ մասամբ (տվյալ իրավիճակով պայմանավորված) կասեցված մնալ մինչեւ այն պահը, երբ կասեցման պատճառ հանդիսացող դեպքը կամ իրադարձությունները չվերանան՝ բացի այն դեպքերից, երբ Բանկը ծանուցել է Պետությանը, որ վերականգնվել է այդուհետ Միջոցների հատկացում ստանալու իրավունքը՝ պայմանով սակայն, որ հետագայում Միջոցների հատկացում ստանալու իրավունքը վերականգնվել է միայն այդ ծանուցման մեջ նշված պայմանների ծավալով եւ հաշվի առնելով դրանք, եւ որեւէ ծանուցում չպետք է ազդի Բանկի որեւէ իրավունքի, իրավասության կամ

իրավունքի վերականգնման վրա կամ խախտի դրանք՝ սույն Բաժնում նկարագրված որեւէ հետագա դեպքի առնչությամբ:

### **Բաժին 5.02 Բանկի կողմից չեղարկումը**

ա) Եթե ցանկացած ժամանակ Բանկը Պետության եւ Ծրագրի իրականացման կազմակերպության հետ խորհրդակցելուց հետո որոշի, որ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորման ենթակա Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով Դրամաշնորհի միջոցներից որեւէ գումար չի պահանջվի, ապա Բանկը կարող է Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը ծանուցելուց հետո չեղարկել Դրամաշնորհի միջոցների այդ գումարը: Դրամաշնորհի միջոցների հասանելիության վերջնաժամկետին Դրամաշնորհի միջոցների որեւէ չհատկացված մաս ինքնաբերաբար կչեղարկվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կողմից այլ բան է սահմանվում:

բ) Եթե Պետության՝ սույն Համաձայնագրի շրջանակներում Դրամաշնորհի միջոցներից որեւէ մասով հատկացում ստանալու իրավունքը կասեցվի սույն Համաձայնագրի Բաժին 5.01-ի համաձայն (*Կասեցում*) երեսուն (30) օր շարունակաբար, ապա Բանկը կարող է, այդ մասին ծանուցելով Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը, ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել Դրամաշնորհի միջոցների տրամադրումը:

գ) Եթե Բանկը չեղարկել է, կամ տեղի է ունեցել իրադարձություն, որի արդյունքում Բանկին իրավունք է վերապահվել ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել Վարկային միջոցների տրամադրումը Ստանդարտ պայմանների Բաժին 7.02-ին (*Բանկի կողմից չեղարկելը*) համապատասխան, ապա Բանկը կարող է, այդ մասին ծանուցելով Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը, ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել Դրամաշնորհի միջոցների տրամադրումը:

դ) Եթե ցանկացած ժամանակ Բանկը որոշի, որ՝

- 1) Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաներից որեւէ մեկի մասով գնումները հակասում են սույն Համաձայնագրին,
- 2) սույն Համաձայնագրի շրջանակներում հատկացված միջոցներն օգտագործվել են այլ նպատակներով, քան նախատեսված է սույն Համաձայնագրով, կամ
- 3) որեւէ Պայմանագրի առնչությամբ Պետության, Ծրագրի իրականացման կազմակերպության, Քաղաքապետարանի կամ որեւէ Կապալառուի ներկայացուցիչ ներգրավվել է որեւէ Արգելված գործունեության մեջ այդ Պայմանագրի հետ կապված գնումների կամ Պայմանագրի կատարման ընթացքում, իսկ Պետությունը, Ծրագրի իրականացման կազմակերպությունը կամ Քաղաքապետարանը ժամանակին համապատասխան գործողություններ չեն ձեռնարկել Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեռով իրավիճակը շտկելու համար,

ապա Բանկը կարող է, այդ մասին ծանուցելով Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը, ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել Դրամաշնորհի միջոցների տրամադրումը: Չեղարկումն ուժի մեջ կմտնի ծանուցումը տալուն պես:

ե) Եթե որեւէ պահի Կիրարկման քաղաքականության եւ ընթացակարգերի համաձայն Բանկը որոշի, որ Պետությունը, Ծրագրի իրականացման կազմակերպությունը, Քաղաքապետարանը, որեւէ Կապալառու, այդ սուբյեկտների կախյալ ձեռնարկությունը կամ դրանց որեւէ պաշտոնյա, աշխատակից, գործակալ կամ ներկայացուցիչ Բանկի կողմից ներառվել է այնպիսի անձանց ցուցակում, որոնք իրավասու չեն Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագիր կամ Բանկից ֆինանսավորում ստանալու, եւ այդ ցուցակը հասանելի է Բանկի կայքում, ապա Բանկը կարող է Դրամաշնորհի միջոցների տրամադրումն ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել: Չեղարկումն

ուժի մեջ է մտնում ծանուցումը տալուն պես:

**Բաժին 5.03 Փոխհատուցման ոչ պայմանական պարտավորություններ, որոնց վրա չի տարածվում կասեցումը կամ չեղարկումը**

Չեղարկումը կամ կասեցումը չի տարածվում այն գումարների նկատմամբ, որոնց մասով գործում են Փոխհատուցման ոչ պայմանական պարտավորությունները, որոնք ստանձնել է Բանկը՝ սույն Համաձայնագրի Բաժին 2.03-ի համաձայն (*Փոխհատուցման պայմանական եւ ոչ պայմանական պարտավորություններ*)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի պարտավորությամբ այլ բան է սահմանվում:

**Բաժին 5.04 Պետության եւ Ծրագրի իրականացման կազմակերպության պարտավորությունները**

Չնայած չեղարկմանը կամ կասեցմանը՝ սույն Համաձայնագրի բոլոր դրույթները շարունակում են ամբողջությամբ ուժի մեջ մնալ եւ գործել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույնով հստակորեն այլ բան է սահմանվում:

**Բաժին 5.05 Հատուցման դեպքերը**

Եթե տեղի է ունեցել հետեւյալ իրադարձություններից որեւէ մեկը, եւ եթե դա կիրառելի է, այն շարունակվում է ստորեւ նշված ժամանակահատվածի ընթացքում, ապա այդ իրադարձության շարունակման ընթացքում ցանկացած պահի Բանկը, այդ մասին ծանուցելով Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը, կարող է պահանջել, որ Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը հատուցեն Դրամաշնորհի միջոցներն ամբողջությամբ կամ դրա որեւէ մասը (եւ վճարեն սույն Համաձայնագրով վճարման ենթակա ցանկացած այլ գումարներ), եւ այդ գումարներն այդուհետ

ենթակա են վճարման (չնայած սույն Համաձայնագրում դրան հակասող որեւէ բանի).

ա) տեղի է ունեցել սույն Համաձայնագրի Բաժին 5.01(ա)(1)-ում (*Կասեցում*) նկարագրված դեպքերից որեւէ մեկը,

բ) տեղի է ունեցել սույն Համաձայնագրի Բաժին 5.01 (ա)(2)-ում (*Կասեցում*) նշված դեպքերից որեւէ մեկը, եւ այն շտկելու հնարավորությամբ հանդերձ՝ շարունակվել է Բանկի կողմից այդ մասին ծանուցելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում,

գ) տեղի է ունեցել կամ շարունակվում է Ստանդարտ պայմանների ու Վարկային համաձայնագրի մեջ նշված՝ Վաղաժամկետ մարման որեւէ հանգամանք, եւ Բանկը հայտարարել է, որ Վարկային բոլոր միջոցները կամ դրանց որեւէ մաս ենթակա է վճարման՝ Ստանդարտ պայմանների Բաժին 7.06-ի (*Վաղաժամկետ մարման հանգամանքները*) համաձայն,

դ) որեւէ պահի, համաձայն Կիրարկման քաղաքականության եւ ընթացակարգերի, Բանկը որոշել է, որ Պետությունը, Ծրագրի իրականացման կազմակերպությունը, Քաղաքապետարանը, որեւէ Կապալառու, այդ սուբյեկտների կախյալ ձեռնարկությունը կամ դրանց որեւէ պաշտոնյա, աշխատակից, գործակալ կամ ներկայացուցիչ Բանկի կողմից ներառվել է այնպիսի անձանց ցուցակում, որոնք իրավասու չեն Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագիր կամ Բանկից ֆինանսավորում ստանալու, եւ այդ ցուցակը հասանելի է Բանկի կայքում,

ե) Պետությունը՝ Վարկային համաձայնագրի շրջանակներում որպես Վարկառու, ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել է Վարկային միջոցների որեւէ չհատկացված մաս՝ համաձայն Ստանդարտ պայմանների Բաժին 3.08-ի (*Չեղարկում*):

## **ՀՈԴՎԱԾ VI. ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ**

### **Բաժին 6.01 Կիրառելիությունը**

Պետության եւ Ծրագրի իրականացման կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները վավեր են եւ կիրառելի իրենց պայմանների համաձայն՝ անկախ դրան հակասող տեղական օրենքի առկայության: Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը որեւէ իրավիճակում իրավունք չունեն որեւէ պահանջ ներկայացնելու առ այն, որ սույն Համաձայնագրի որեւէ դրույթ անվավեր է կամ որեւէ պատճառով չի կարող կիրարկվել:

### **Բաժին 6.02 Իրավունքների իրացումից չօգտվելը**

Որեւէ խախտման հետեւանքով սույն Համաձայնագրով Կողմերից մեկին վերապահված որեւէ իրավունքի, իրավասության կամ իրավունքի վերականգնման հետաձգումը կամ ձախողումը չպետք է վնաս հասցնի այդ իրավունքին, իրավասությանը կամ իրավունքի վերականգնմանը կամ չպետք է մեկնաբանվի որպես դրանցից հրաժարում կամ համաձայնություն այդպիսի խախտմանը. նմանապես, այդ կողմի գործողությունները, կապված խախտման հետ, կամ նրա համաձայնությունը որեւէ խախտմանը, չպետք է ազդի այդ կողմի որեւէ իրավունքի, իրավասության կամ իրավունքի վերականգնման վրա կամ վնաս հասցնի դրան՝ որեւէ հետագա խախտման առնչությամբ:

### **Բաժին 6.03 Վեճերի լուծումը**

Ստանդարտ պայմանների Բաժին 8.04-ի (*Վեճերի լուծում*) դրույթները կիրառվում են այնպես, ինչպես դրանք կկիրառվեին, եթե ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ՝ համապատասխան փոփոխություններով,

բացառությամբ հետեւյալ կետերի՝

- i) «Վարկային համաձայնագրին» կամ «Ծրագրի համաձայնագրին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես «սույն Համաձայնագրին» արվող հղումներ, եւ
- ii) «Վարկառուին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես «Պետությանը» արվող հղումներ:

## **ՀՈԴՎԱԾ VII. ՈՒԺԻ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ. ԴԱԴԱՐԵԼԸ**

### **Բաժին 7.01 Ուժի մեջ մտնելու ամսաթիվը**

Եթե Բանկը, Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունն այլ կերպ չեն համաձայնել, ապա սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Բանկը Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը ծանուցում է ուղարկում առ այն, որ Բանկն ընդունում է այն ապացույցները, որոնք պահանջվում են սույն Համաձայնագրի Բաժին 7.02-ի (*Ուժի մեջ մտնելու նախապայմանները*) եւ Բաժին 7.03-ի (*Իրավաբանական եզրակացություն*) համաձայն:

### **Բաժին 7.02 Ուժի մեջ մտնելու նախապայմանները**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ չի մտնի, մինչեւ Բանկը բավարար ապացույց չունենա առ այն, որ սույն Համաձայնագրի Բաժին 5.01(ա)-ում (*Կասեցում*) կամ Բաժին 5.05-ում (*Հատուցման դեպքերը*) նշված դեպքերից որեւէ մեկը տեղի չի ունեցել եւ չի շարունակվում, եւ մինչեւ Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեռով եւ բովանդակությամբ չկատարվեն ստորեւ ներկայացված բոլոր նախապայմանները, կամ մինչեւ Բանկն իր բացառիկ հայեցողությամբ դրանցից չիրաժարվի ամբողջությամբ կամ մասամբ՝ որոշակի հանգամանքներով

պայմանավորված կամ անվերապահորեն.

ա) Բանկը ստացել է սույն Համաձայնագրի երկու բնօրինակ՝ պատշաճ կերպով ձեւակերպված,

բ) Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեւով եւ բովանդակությամբ կատարվել են Վարկային համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու բոլոր նախապայմանները՝ Ստանդարտ պայմանների Բաժին 9.02-ի (*Ուժի մեջ մտնելու նախապայմանները*) եւ Վարկային համաձայնագրի Բաժին 5.01-ի (*Ուժի մեջ մտնելու նախապայմանները*) համաձայն՝ բացառությամբ միայն սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պայմանի,

գ) Բանկը, իր կողմից բավարար դիտարկվող ձեւով եւ բովանդակությամբ, ստացել է ապացույցներ առ այն, որ սույն Համաձայնագրի ձեւակերպումն ու կատարումը Պետության եւ Ծրագրի իրականացման կազմակերպության անունից պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել են բոլոր անհրաժեշտ կառավարական, վարչական եւ կորպորատիվ գործողությունների արդյունքում,

դ) Բանկին տրամադրվել են բոլոր մյուս փաստաթղթերը, որոնք նա ողջամիտ կերպով պահանջել է:

### **Բաժին 7.03 Իրավաբանական եզրակացություն**

Որպես սույն Համաձայնագրի Բաժին 7.02-ի (*Ուժի մեջ մտնելու նախապայմանները*) համաձայն ներկայացվող բոլոր ապացույցների մի մաս, թե՛ Պետությունը եւ թե՛ Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է ներկայացնեն կամ կազմակերպեն, որ սույն Համաձայնագրի հետ կապված՝ ներկայացվի իրավաբանական եզրակացություն՝ Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեւով եւ բովանդակությամբ, Պետության անունից՝ Արդարադատության նախարարի կողմից, իսկ Ծրագրի իրականացման կազմակերպության անունից՝ իրավաբանական բաժնի ղեկավարի կողմից կամ ցանկացած իրավաբանի կողմից, որին նշանակել է Ծրագրի իրականացման



կազմակերպությունը, եւ որին համաձայնել է Բանկը, եւ այն պետք է հաստատի, որ սույն Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել, ինչպես նաեւ ձեւակերպվել ու հանձնվել է Պետության եւ Ծրագրի իրականացման կազմակերպության անունից, եւ այն վավեր է եւ իրավական ուժ ունի Պետության եւ Ծրագրի իրականացման կազմակերպության համար եւ կիրարկելի է իր պայմաններին համապատասխան:

#### **Բաժին 7.04 Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը**

Այն դեպքում, երբ՝

ա) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ չի մտնում սույն Համաձայնագրի օրվանից հարյուր քսան (120) օրացուցային օրվա ընթացքում, կամ

բ) Վարկային համաձայնագիրն ուժի մեջ չի մտնում մինչեւ Վարկային համաձայնագրի Բաժին 5.04-ում (*Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը*) նշված ամսաթիվը կամ Բանկի կողմից Պետությանը՝ որպես Վարկառուի, ծանուցելու որեւէ այլ ամսաթիվ՝ համաձայն Ստանդարտ պայմանների Բաժին 9.04-ի (*Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը*),

ապա սույն Համաձայնագրով Բանկի բոլոր պարտավորությունները դադարում են, եթե Բանկն ուշացման պատճառները հաշվի առնելուց հետո սույն Բաժնի նպատակներով ավելի ուշ ժամկետ չի սահմանում: Բանկն անհապաղ պետք է ծանուցի Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանն այդպիսի ավելի ուշ ժամկետի մասին:

#### **Բաժին 7.05 Կատարման արդյունքում դադարելը**

ա) Սույն Համաձայնագիրը կշարունակի ուժի մեջ մնալ, մինչեւ Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը չկատարեն իրենց բոլոր համապատասխան պարտավորությունները՝ սույն Համաձայնագրի

դրույթների համաձայն, եթե այն ավելի շուտ չդադարի իր պայմանների համաձայն, եւ եթե Քաղաքապետարանը կատարել է իր բոլոր պարտավորությունները՝ համաձայն Ծրագրի աջակցության համաձայնագրի դրույթների՝ պայմանով, որ Բաժին 6.03-ի (*Վեճերի լուծումը*) դրույթները շարունակեն ուժի մեջ մնալ սույն Համաձայնագրի դադարեցումից հետո:

բ) Չնայած սույն Համաձայնագրում որեւէ հակասող դրույթի՝ Բաժին 5.05(դ)-ի դրույթները (*Հատուցման դեպքերը*) պետք է շարունակեն ուժի մեջ մնալ սույն Համաձայնագրի դադարեցումից հետո՝ Ծրագրի ավարտի ամսաթվից հետո հինգ (5) տարվա ընթացքում:

## **ՀՈԴՎԱԾ VIII . ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **Բաժին 8.01 Ծանուցումները**

Սույն Համաձայնագրով պահանջվող կամ թույլատրվող ցանկացած ծանուցում կամ խնդրանք պետք է արվի գրավոր: Եթե սույն Համաձայնագրի Բաժին 7.01-ով (*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը*) այլ բան նախատեսված չէ, ապա համարվում է, որ նման ծանուցումը կամ խնդրանքը ներկայացվել է պատշաճ կերպով, եթե այն հանձնվել է համապատասխան կողմին ներքոնշյալ հասցեով կամ այնպիսի այլ հասցեով, որի մասին այդ կողմը գրավոր տեղեկացրել է ծանուցումը կամ խնդրանքը ներկայացնող կողմին: Եթե սույն Համաձայնագրում կամ ՎՋԵԲ-ի՝ Միջոցների հատկացման ձեռնարկում այլ բան նախատեսված չէ, ապա [ծանուցումը կամ խնդրանքը] կարելի է հանձնել առձեռն, փոստով կամ ֆաքսիմիլային հաղորդման միջոցով: Ֆաքսիմիլային հաղորդման միջոցով ուղարկված ծանուցումները պետք է նաեւ հաստատվեն փոստով:

### **Պետության համար՝**

Ֆինանսների Նախարարություն,

Հայաստանի Հանրապետություն,

Երեւան 0010,

Մելիք-Աղամյան փողոց, շենք 1

Ուղղվում է՝ Միջազգային համագործակցության  
վարչություն

Հեռ. (սուրհանդակային ծառայության համար)՝ +374 11 800 333

Էլ. փոստ՝ [icd@minfin.am](mailto:icd@minfin.am)

### **Ծրագրի իրականացման կազմակերպության համար՝**

#### **«Երեւանի ավտոբուս» ՓԲԸ**

Հայաստանի Հանրապետություն,

Երևան 0076,

Նոր Նորքի 4-րդ զանգված

Թևոսյան փողոց, շենք 5

Ուղղվում է՝ Էլբակ Թարփոշյանին

Էլ. փոստ՝ [yerevani.avtobus@gmail.com](mailto:yerevani.avtobus@gmail.com)

### **Բանկի համար՝**

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ,

Ուան Իքսչեյնջ Սքուեր,

Լոնդոն EC2A 2JN,

Միացյալ Թագավորություն

Ուղղվում է՝ Գործառնությունների կառավարման բաժին

/ Գործառնություն թիվ 51749

Էլ. փոստ՝ oad@ebrd.com

### **Բաժին 8.02 Գործելու լիազորություն**

Սույն Համաձայնագրի ներքո Պետության կողմից պահանջվող կամ թույլատրված ցանկացած գործողություն եւ սույն Համաձայնագրի ներքո պահանջվող կամ ստորագրման համար թույլատրված ցանկացած փաստաթուղթ պետք է իրականացվի կամ ստորագրվի Պետության լիազոր ներկայացուցչի կամ Պետության այլ պաշտոնատար անձանց կողմից, որոնց Պետության Լիազորված ներկայացուցիչ կարող է նշանակել գրավոր կերպով: Պետությունը Բանկին պետք է ներկայացնեն լիազորված պաշտոնյայի լիազորության ապացույցը եւ նրա լիազորված ստորագրության նմուշը՝ համաձայն Առդիր 2-ում ներկայացված ձեւանմուշի (*Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակի ձեւանմուշ*):

### **Բաժին 8.03 Փոփոխությունները**

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Պետության լիազորված ներկայացուցչի, Ծրագրի իրականացման կազմակերպության լիազորված ներկայացուցչի եւ Բանկի՝ պատշաճ լիազորված պաշտոնատար անձի կողմից ստորագրված գրավոր փաստաթղթով: Սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն, որը Բանկի և Պետության համատեղ կարծիքով չի ավելացնում Պետության պարտավորությունները, ուժի մեջ կմտնի նման գրավոր փաստաթուղթը Պետության լիազորված ներկայացուցչի, Ծրագրի կազմակերպության լիազորված ներկայացուցչի և Բանկի պատշաճ լիազորված պաշտոնյայի կողմից ստորագրվելու օրվանից:

#### **Բաժին 8.04 Անգլերենը**

Սույն Համաձայնագիրը կազմվել է և կնքվել է անգլերենով: Սույն Համաձայնագրի համաձայն ներկայացված ցանկացած փաստաթուղթ պետք է լինի անգլերենով: Ցանկացած այլ լեզվով փաստաթղթերը պետք է ուղեկցվեն դրանց վավերացված անգլերեն թարգմանությամբ, եւ այդ հաստատված թարգմանությունը վերջնական է:

#### **Բաժին 8.05 Փոխհատուցումը**

ա) Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը պարտավորվում են լիակատար պատասխանատվություն ստանձնել, համաձայնել, փոխհատուցել եւ զերծ պահել Բանկին եւ նրա պաշտոնյաներին, տնօրեններին, աշխատակիցներին, գործակալներին եւ ծառայողներին ցանկացած եւ բոլոր պարտավորություններից, պարտականություններից, կորուստներից, վնասներից (փոխհատուցման բնույթի, պատժիչ կամ այլ տեսակի), տուգանքներից, պահանջներից, ընթացակարգերից, հարկերից, հայցերից, ծախսերից եւ ծախքերից (այդ թվում՝ իրավաբանական խորհրդատվության ողջամիտ վճարներից եւ հետաքննության ծախսերից ու ծախքերից), ինչպիսիք էլ դրանք լինեն, ընդ որում, չխախտելով ընդհանուր սկզբունքը՝ նրանցից, որոնք առաջանում են պայմանագրերից կամ առանց մեղքի պատասխանատվությունից (ներառյալ՝ անփութության հետեւանքով) կամ խիստ պարտավորության արդյունքում կամ այլ կերպ, որոնք սահմանվում կամ բերվում են ընդդեմ Բանկի կամ նրա պաշտոնյաների, տնօրենների, աշխատողների, գործակալների կամ ծառայողների (անկախ նրանից՝ դրանք փոխհատուցվում են նաեւ որեւէ այլ անձի կողմից որեւէ այլ փաստաթղթով), եւ որոնք որեւէ կերպ կապված են հետեւյալի հետ կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում են հետեւյալից.

- 1) սույն Համաձայնագրով նախատեսված որեւէ գործարքից կամ դրա

կնքումից, հանձնումից կամ կատարումից,

2) Ծրագրի իրականացման կազմակերպության օբյեկտների շահագործումից կամ պահպանումից կամ Ծրագրի իրականացման կազմակերպության՝ սեփականության իրավունքից, վերահսկումից կամ նրան պատկանելուց, կամ

3) Բանկի կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում իր որեւէ իրավունքի եւ պաշտպանության միջոցի կիրառումից, եւ

պայմանով, որ Բանկը չպետք է սույնով իրավունք ունենա հատուցում ստանալու սեփական կոպիտ անփութության կամ կանխամտածված խախտման համար:

բ) Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունն ընդունում են, որ Բանկը կնքում է սույն Համաձայնագիրը եւ գործում է միայն որպես դրամաշնորհ տրամադրող, այլ ոչ թե Պետության կամ Ծրագրի իրականացման կազմակերպության խորհրդատու: Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը ներկայացնում եւ երաշխավորում են, որ կնքելով սույն Համաձայնագիրը՝ իրենք ներգրավել եւ հենվել են իրավաբանական, ֆինանսական եւ այլ մասնագիտական հարցերով իրենց սեփական խորհրդատուների խորհրդատվության վրա եւ չեն ապավինել ու այսուհետ նույնպես չեն ապավինելու Բանկի կողմից տրված որեւէ խորհրդատվության վրա:

### **Բաժին 8.06 Հանձնարարությունները**

Պետությունն ու Ծրագրի իրականացման կազմակերպությունը չպետք է սույն Համաձայնագրով սահմանված իրենց իրավունքները կամ պարտավորություններն ամբողջությամբ կամ դրանցից որեւէ մեկը հանձնարարեն կամ այլ կերպ փոխանցեն առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

### **Բաժին 8.07 Իրավունքները, պաշտպանության միջոցները եւ**

## **հրաժարումները**

Բանկի՝ սույն Համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պաշտպանության միջոցները չպետք է տուժեն որեւէ գործողությունից կամ որեւէ բանից, որը կարող է, բացի սույն Բաժնից, սահմանափակել այդ իրավունքներն ու պաշտպանության միջոցները: Ոչ մի գործարար սովորույթ եւ Բանկի իրավունքների, լիազորությունների կամ պաշտպանության միջոցների կիրառման ոչ մի հետաձգում կամ չկիրառում չպետք է խախտի որեւէ նման իրավունք, լիազորություն կամ պաշտպանության միջոց կամ ընկալվի որպես դրանից հրաժարում: Սույն Համաձայնագրի որեւէ պայմանից հրաժարումը պետք է լինի գրավոր եւ ստորագրվի Բանկի կողմից: Եթե Բանկը հրաժարվում է Դրամաշնորհի միջոցների հատկացման որեւէ պայմանից, ապա պետք է համարվի, որ Պետությունը, ստանալով այդ Միջոցների մասհանումը, համաձայնել է այդ հրաժարման պայմաններին, եւ Բանկի՝ այդ պայմանի կատարումը պահանջելու իրավունքը պետք է բացահայտորեն պահպանվի յուրաքանչյուր հետագա Մասհանման նպատակների համար: Սույն Համաձայնագրով եւ դրանով նշված այլ համաձայնագրերով նախատեսված իրավունքներն ու պաշտպանության միջոցները կումուլյատիվ են եւ չպետք է խոչընդոտեն դրանց այլ կամ հետագա կիրառումը կամ որեւէ այլ իրավունքի կամ պաշտպանության միջոցի կիրառումը:

### **Բաժին 8.08 Տեղեկությունների բացահայտումը**

ա) Բանկը կարող է բացահայտել Պետությանը, Քաղաքապետարանին, Ծրագրի իրականացման կազմակերպությանը եւ այս գործարքին վերաբերող այնպիսի փաստաթղթեր, տեղեկություններ եւ նշումներ (ներառյալ՝ սույն Համաձայնագրի, Ծրագրի աջակցության համաձայնագրի եւ սույնով նախատեսված ցանկացած այլ համաձայնագրի պատճենները), որոնք Բանկը նպատակահարմար կհամարի ցանկացած նպատակի համար՝ կապված ցանկացած վեճի հետ, որտեղ ներգրավված են Պետությունը,

Քաղաքապետարանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունը, սույն Համաձայնագրի կամ սույնով նախատեսված ցանկացած այլ համաձայնագրի շրջանակներում Բանկի որեւէ իրավունքի պահպանման կամ իրականացման նպատակով կամ Բանկին վճարման ենթակա ցանկացած գումար ստանալու եւ Հիմնադրամի կանոնադրության համաձայն հաշվետվությունների տրամադրման նպատակով:

բ) Բանկը կարող է Եվրոպական հանձնաժողովին բացահայտել Պետության կամ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից տրամադրված ցանկացած տեղեկություն կամ այլ նյութեր եւ այդպիսի տեղեկությունների կամ այլ նյութերի մասին զեկուցել Հիմնադրամին:

#### **Բաժին 8.09 Կրկնօրինակները**

Սույն Համաձայնագիրը կարող է կնքվել ցանկացած թվով կրկնօրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, որոնք, սակայն, բոլորը միասին մեկ եւ միեւնույն համաձայնագիրն են:

**Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ**, սույնի կողմերը, գործելով իրենց պատշաճ Լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը վեց օրինակից վերը նշված ամսաթվին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**



---

Անուն՝

Պաշտոն՝

**«Երեւանի ավտոբուս» ՓԲԸ**

---

Անուն՝

Պաշտոն՝

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ**

---

Անուն՝

Պաշտոն՝

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ  
ՊԱՐԱԳԱՆԵՐԸ**

Այս հավելվածում ներկայացված աղյուսակը սահմանում է Դրամաշնորհից ֆինանսավորվող պարագաները եւ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող յուրաքանչյուր պարագայի համար հատկացված՝ Դրամաշնորհի գումարը:

|   | <b>Դրամաշնորհի միջոցներով<br/>ֆինանսավորվող պարագա</b>                                     | <b>Դրամաշնորհի միջոցների<br/>հատկացված գումարը եվրոյով</b> |
|---|--|--|
| 1 | Մոտավորապես 100 միավոր 12<br>մետրանոց, ժամանակակից, ցածր<br>հատակով ՍԲԳ ավտոբուսների գնում | 5,000,000  |
|   | <b>Ընդամենը</b>  | <b>5,000,000</b>   |

# ԱՌԴԻՐ 1. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

[Ամսաթիվ]

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ

Ուան Իքսչեյնջ Սքուեր,

Լոնդոն EC2A 2JN,

Միացյալ Թագավորություն

Ուղղվում է՝ Գործառնությունների կառավարման բաժին

**Գործառնություն թիվ [ ] (Դրամաշնորհային բաղադրիչ)**

**Միջոցների հատկացման հայտ թիվ \_\_\_\_\_**

**Թեմա՝ 2021 թվականի \_\_\_\_\_-ին կնքված Դրամաշնորհային  
համաձայնագիր Հայաստանի Հանրապետության, «Երեւանի ավտոբուս»  
ՓԲԸ-ի եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ (Բանկ):**

Սույնով խնդրում ենք հետեւյալ Միջոցների հատկացումը՝ վերը նշված  
Դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին համապատասխան.

|  |        |
|--|--------|
| Դրամաշնորհի արժույթը՝                        | [ԵՎՐՈ] |
| Պահանջվող վճարման արժույթը՝                  | [2]    |
| Ֆինանսավորված գումարի (գումարների) արժույթը՝ | [3]    |
| Արժույթի գնահատման ամսաթիվը՝                 | [4]    |

Ենթակա է վճարման (գումար ստացողը)՝ [5]

### **Շահառուի բանկային տվյալները**

Շահառուի հաշվեհամարի անվանումը՝ [6]

Շահառուի հաշվեհամարը/IBAN համարը՝ [7]

Շահառուի բանկի անվանումը՝ [8]

Շահառուի բանկի SWIFT կոդը՝ [9]

Շահառուի բանկի հասցեն՝ [10]

### **Շահառուի բանկի թղթակից բանկի տվյալները**

Թղթակից բանկի անվանումը՝ [11]

Թղթակից բանկի SWIFT կոդը՝ [12]

Հաշվեհամարի անվանումը՝ [13]

Հաշվեհամարը/IBAN համարը՝ [14]

Տեղեկանք վճարման մասին՝ [15]

Սույնով հավաստում ենք, որ այս ծախսերի կապակցությամբ մենք նախկինում չենք խնդրել Դրամաշնորհի միջոցների հատկացում: Մենք չենք ստացել եւ մտադիր չենք որեւէ այլ դրամաշնորհից, փոխառությունից կամ վարկից այդ նպատակով միջոցներ ստանալ:

Սույն հայտում ներառված ապրանքներն ու ծառայությունները գնվել կամ գնվում են համաձայն Դրամաշնորհային համաձայնագրի պայմանների:

Սույնով հավաստում ենք ՎՋԵԲ-ին, որ i) մենք կատարում ենք

Դրամաշնորհային համաձայնագրով եւ Վարկային համաձայնագրով սահմանված մեր պարտավորությունները, եւ ii) որեւէ դեպք տեղի չի ունեցել, որը կարող է նյութապես եւ բացասաբար ազդել մեր գործառնությունների կամ ֆինանսական վիճակի վրա կամ մեր՝ Ծրագրի իրականացման կարողության կամ Դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում մեր պարտականություններից որեւէ մեկի կատարման վրա:

Հարգանքով՝

[16] \_\_\_\_\_

Անուն

Պաշտոն

Ներդիրներ՝ Ամփոփաթերթերի ընդհանուր քանակը՝ [17]

Փաստաթղթերի ընդհանուր քանակը՝[18]

**Ծանոթագրություն՝ Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշը լրացնելու վերաբերյալ**

[1] Պետությունը պետք է համարակալի յուրաքանչյուր հայտը: Դրամաշնորհի միջոցների հատկացման առաջին հայտը պետք է լինի թիվ 1, հաջորդող հայտերը՝ 2, 3 եւ այլն: Պետությունն է հետեւում Դրամաշնորհի միջոցների հատկացման մասով բոլոր այն հայտերի համարներին, որոնք նա ներկայացրել է տվյալ Դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում: Հայտի ձեւանմուշները պետք է համարակալված լինեն նույն հաջորդական թվային համակարգով՝ անկախ այն բանից՝ դրանք ուղղակի վճարման մասով հատկացման, թե փոխհատուցման պարտավորության տրամադրման համար են: Համարակալման այս համակարգի օգտագործումը թույլ է տալիս խուսափել շփոթմունքից այն դեպքում, երբ ձեւանմուշները երկար ժամանակ մնում են փոստում կամ ֆաքսով ուղարկվում են մեկից ավելի անգամ:

[2] Խնդրում ենք նշել արժույթը, որով պահանջվում է անել փաստացի վճարումը: Դա պետք է լինի կա՛մ դրամաշնորհի արժույթը, կա՛մ ծախսերի արժույթը (տե՛ս ստորեւ բերված [3]-րդ կետը): Որոշ դեպքերում Բանկը կարող է համաձայնել վճարել երրորդ արժույթով, որի դեպքում այդ արժույթը ձեռք բերելու համար Բանկը կգործի որպես Պետության ներկայացուցիչ:

Եթե վճարումը պահանջվում է մեկից ավելի արժույթով, ապա յուրաքանչյուր արժույթի համար պետք է օգտագործվի առանձին հայտ:

[3] Ֆինանսավորված գումարը(գումարները) սկզբնական ծախսերն են իրենց սկզբնական արժույթով, ինչպես մանրամասն նկարագրված է ամփոփաթերթում, որոնք հաշվարկվում են Դրամաշնորհային համաձայնագրում նշված՝ համապատասխան տոկոսով Դրամաշնորհից ֆինանսավորվող կիրառելի եւ թույլատրելի պարագայի համար: Այստեղ ներկայացված գումարը(գումարները) պետք է համապատասխանեն ամփոփաթերթի բաժին [15]-ի ընդհանուր գումարին(գումարներին):

[4] Արժեքի գնահատման ամսաթիվը /value date/ այն օրն է, երբ ՎՋԵԲ-ի հաշվից դեբետագրվում է հատկացվող գումարը: ՎՋԵԲ-ը չի կարող

երաշխավորել, որ շահառուի հաշվին նույն օրը կկրեդիտագրվի այդ գումարը, քանի որ դա կախված է վճարահաշվարկային համակարգում կամ շահառուի երկրի՝ ստացող բանկում ընդունված ընթացակարգերից: ՎՋԵԲ-ի կողմից հայտը ստանալու եւ պահանջվող՝ արժեքի գնահատման ամսաթվի միջեւ պետք է լինի առնվազն 15 աշխատանքային օր: Եթե իրականում վճարումը հնարավորինս արագ է անհրաժեշտ եւ ոչ թե արժեքի գնահատման տվյալ ամսաթվին, ապա ավելի լավ է չնշել կոնկրետ ամսաթիվ, այլ նշել՝ «հնարավորինս շուտ» այս [4] դաշտում: Այդ դեպքում ՎՋԵԲ-ն ամեն դեպքում վճարումը կանի 15 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հնարավորության դեպքում՝ ավելի շուտ: (Խնդրում ենք հաշվի առնել, որ վճարումը կարող է երաշխավորվել 15 աշխատանքային օրվա ընթացքում միայն այն դեպքում, երբ Միջոցների հատկացման հայտը ճիշտ է եւ ամբողջական):

[5] Միջոցների հատկացումը կատարվում է շահառուին: Սովորաբար դա Կապալառուն է, սակայն եթե Բանկի հետ այլ գրավոր համաձայնություն է ձեռք բերվել, եւ կից ներկայացվող փաստաթղթերը (տե՛ս ամփոփաթերթիկը) ապացուցում են, որ Պետությունը արդեն վճարել է Կապալառուին, ապա վճարումն արվում է Պետությանը:

[6] Շահառուի հաշվեհամարի անվանումը սովորաբար գումար ստացողի անունն է:

[7] Շահառուի հաշվեհամարը պահանջվում է ձգձգումներից խուսափելու համար: Մեծ թվով երկրներում բանկերը հրաժարվում են վճարումն անելուց, եթե շահառուի հաշվեհամարը նշված չէ վճարման հրահանգներում: Առկայության դեպքում նշվում է IBAN համարը (Միջազգային բանկային հաշվեհամարը):

[8] Շահառուի բանկն այն բանկն է, որտեղ շահառուն հաշիվ ունի: Խնդրում ենք նշել բանկի անունը եւ քաղաքը:

[9] Պետք է նշվի SWIFT կոդը:

[11] Շահառուի բանկի թղթակից բանկի տվյալները պահանջվում են միայն

այն դեպքում, եթե վճարումը չի կատարվելու այն երկրի արժույթով, որտեղ գտնվում է շահառուի բանկը: Այդ դեպքում թղթակից բանկն այն բանկն է, որը գտնվում է վճարման արժույթի երկրում, որտեղ ստացողի բանկը հաշիվ ունի:

[12] Պետք է նշվի թղթակից բանկի SWIFT կոդը:

[13] Շահառուի բանկային հաշվի անվանումը շատ դեպքերում պարզապես շահառուի բանկի անունն է:

[14] Շահառուի բանկի հաշվեհամարն էական է, եթե շահառուի բանկը թղթակից բանկում ունի ավելի քան մեկ հաշիվ, կամ եթե նա SWIFT համակարգի (միջազգային էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի) անդամ չէ: Հակառակ դեպքում այս համարն օգտակար է, սակայն ոչ պարտադիր: Առկայության դեպքում նշվում է IBAN համարը (Միջազգային բանկային հաշվեհամարը):

[15] Վճարման մասին տեղեկանքը, որը ՎՋԵԲ-ն ուղարկում է վճարման հետ միասին, օգնում է շահառուին նույնականացնել վճարումը: Եթե որեւէ կոնկրետ տեղեկանք չի պահանջվում, ապա ՎՋԵԲ-ը նշում է Պետության անունը եւ համաձայնագրի համարը:

[16] Ստորագրություն: Հայտի ամփոփաթերթը ստորագրվում է անձի (անձանց) կողմից, որը (որոնք) լիազորված է (են) Պետության լիազորված ներկայացուցչի կողմից տրամադրված՝ Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակի հիման վրա:

[17] Ամփոփաթերթերում թվարկվում են Միջոցների հատկացման հայտին կից ներկայացվող բոլոր հիմնավորող փաստաթղթերը: Եթե դրանք շատ են, ապա ցանկալի է յուրաքանչյուր կատեգորիայի համար օգտագործել առանձին ամփոփաթերթ:

[18] Փաստաթղթերը (պայմանագրերը, հաշիվ-ապրանքագրերը, ստացականները եւ այլն) պետք է համարակալվեն եւ ներկայացվեն նույն



հերթականությամբ, որով դրանք նշված են ամփոփաթերթերում: Դրանց ընդհանուր թիվը պետք է նշվի այստեղ՝ ՎՋԵԲ-ի կողմից ստուգման գործընթացն արագացնելու համար:

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ**

**Պետության անունը [1]** ..... **Գործառնության համարը No [3]**..... **Հայտի համարը No [4]** .....

**Ամսաթվեր [2]** ..... **Ամփոփաթերթի համարը No [5]** ..... **Մասհանում Դրամաշնորհի միջոցներով Ֆինանսավորվող պարագա [6]** ...../...../..... (համար/անվանում/ %)

| Պարագայի համարը No | Պարագայի նկարագրությունը | Պայմանագրի համարը եւ ամսաթիվը | Կապալառուի անունը եւ հասցեն | Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների հակիրճ նկարագրությունը | Պայմանագրի արժույթը եւ ընդհանուր գումարը | Թույլատրելի ծախսերի արժույթն ու գումարը | Ֆինանսավորման գումարը՝ ծախսերի արժույթով |
|--------------------|--------------------------|-------------------------------|-----------------------------|--|--|---|--|
| [7]                | [8]                      | [9]                           | [10]                        | [11]   | [12]                                     | [13]                                    | [14]                                     |
|                    |                          |                               |                             |  |  |   |  |

**Ստորագրություն**  
[16].....

ԸՆԴԱՄԵՆԸ (ըստ արժույթի)  
[15]  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

[1] Անվանումը: Պետության անվանումը: Սա պետք է լինի նույնը, ինչ Միջոցների տրամադրման հայտի ձեւանմուշում, որի մասն է կազմում այս ամփոփաթերթը:

[2] Ամսաթիվ: Հայտի ամսաթիվը: Սա պետք է լինի նույնը, ինչ Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշում, որի մասն է կազմում այս ամփոփաթերթը:

[3] Գործառնության համարը: Այս թիվը նույնն է, ինչ Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշում, որի մասն է կազմում այս ամփոփաթերթը:

[4] Հայտի համարը: Սա Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշի համարն է, որի մասն է կազմում այս ամփոփաթերթը:

[5] Ամփոփաթերթի համարը: Միջոցների հատկացման յուրաքանչյուր հայտի համար ամփոփաթերթերը պետք է համարակալված լինեն՝ սկսած 1-ից, իսկ նրանց ընդհանուր թիվը պետք է նշված լինի Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշում, որի մասն են կազմում դրանք:

[6] Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագայի մասով հատկացումը: Սա ծրագրի շրջանակներում Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագա է, որը ֆինանսավորվելու է պահանջվող Միջոցների հատկացման գումարներից: Խնդրում ենք Դրամաշնորհային համաձայնագրում գտնել Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագայի անվանումը եւ հղման համարը, ինչպես նաեւ ֆինանսավորվելիք ծախսերի տոկոսը (օրինակ «Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագա # (Յբ), սարքավորում, 60%»):

Եթե Միջոցների հատկացման մեկ հայտը ներառում է Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող՝ մեկից ավելի պարագայի ծախսերը, ապա Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող յուրաքանչյուր պարագայի համար պետք է օգտագործվի առանձին ամփոփաթերթ:

[7] Պարագայի համարը: Բոլոր փաստաթղթերը (հաշիվ-ապրանքագրերը, պայմանագրերը, ստացականները եւ այլն) պետք է ներկայացվեն նույն հերթականությամբ, որով նրանք հայտնվում են ամփոփաթերթում (ամփոփաթերթերում): Նույնականացման դյուրացման համար յուրաքանչյուր նոր Միջոցների հատկացման հայտի դեպքում փաստաթղթերը պետք է համարակալվեն՝ սկսած 1, 2, 3-ից եւ այլն, եւ այդ համարը պետք է հստակ նշված լինի փաստաթղթի վրա: Բոլոր ամփոփաթերթերի ընդհանուր թվաքանակը նշվում է Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշի վրա:

[8] Պարագայի նկարագրությունը: Խնդրում ենք նկարագրել պարագաներից յուրաքանչյուրը, օրինակ՝ «հաշիվ-ապրանքագիր», «ստացական», «ինժեների տեղեկանք», «[...]–ի թարգմանություն» եւ այլն:

[9] Պայմանագրի պատվերի համարը եւ ամսաթիվը: Խորհուրդ է տրվում, որ պայմանագրին տրվի սկզբնական համար Ծրագրի իրականացման կազմակերպության եւ Կապալառուի կողմից այն կնքվելու ժամանակ: ՎՋԵԲ-ն այս համարն ընդունելու է սեփական հաշվառման նպատակներով: Եթե պայմանագիրը չի ստացել սկզբնական համար, ապա ՎՋԵԲ-ը նրան կհատկացնի համար եւ հաստատման պահին կտեղեկացնի Պետությանը: Եթե Պետությունը չիմանա համարը ամփոփաթերթը լրացնելու պահին, ապա այս մասը կարող է բաց մնալ ՎՋԵԲ-ի կողմից այն լրացնելու համար:

Այս սյունակում նաեւ պետք է նշվի պայմանագրի/գնման պատվերի ամսաթիվը:

Ծանոթագրություն. Միեւնույն պայմանագիրը կարող է հայտնվել Միջոցների հատկացման մեկից ավելի հայտերում, եթե ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների մատակարարումը (տե՛ս [11]) եւ հետեւաբար այդ ապրանքների եւ այլ ապրանքների համար վճարումը կատարվում են փուլերով:

[10] Կապալառուի անունը եւ հասցեն: Գործընկերոջ (Կապալառուի) անունը եւ հասցեն, որը նշվել է պայմանագրում/գնման պատվերում, ինչպես նկարագրված է [9]-ում:

[11] Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ամփոփ նկարագիրը: Այս ապրանքները, աշխատանքները կամ ծառայությունները պետք է համապատասխանեն Պայմանագրում կամ այլ փաստաթղթերում ներկայացված մանրամասներին եւ պետք է պատկանեն [6]-ում նշված՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների շարքին:

[12] Պայմանագրի արժույթը եւ ընդհանուր գումարը: [9]-ում նշված Պայմանագրի ընդհանուր գումարը՝ սկզբնական արժույթով:

[13] Թույլատրելի ծախսերի արժույթը եւ գումարը: Ըստ ծախսերից յուրաքանչյուրի՝ վճարված կամ վճարման ենթակա ընդհանուր գումարը՝ սկզբնական արժույթով, ինչպես ներկայացված է հաշիվ-ապրանքագրերում կամ [7]-ում եւ [8]-ում թվարկված այլ փաստաթղթերում: Երբ յուրաքանչյուր ծախսի համար առկա է մեկից ավելի «պարագա» (օրինակ՝ հաշիվ-ապրանքագիր, վկայական եւ ստացական, բոլորը՝ նույն ծախսման համար), ապա այդ պարագաները պետք է գրվեն փակագծերում, իսկ սյունակում պետք է միայն մեկ գումար երեւա:

[14] Ֆինանսավորման գումարը: [13]-րդ սյունակում թվարկված յուրաքանչյուր գումարի համար սույն [14]-րդ սյունակում պետք է լինի համապատասխան գումար, որը հաշվարկվում է [6]-ում նշված տոկոսադրույքով եւ համապատասխանում է այս ամփոփաթերթի կատեգորիային: Ֆինանսավորման գումարը պետք է լինի պայմանագրի եւ ծախսերի բնօրինակ արժույթով (սյունակներ 12 եւ 13): Սա կարող է համապատասխանել վարկի կամ վճարման արժույթին կամ չհամապատասխանել դրանց:

[15] Ընդամենը: Ֆինանսավորման գումարները, ինչպես նշված է [14]-ում, պետք է գումարվեն՝ դառնալով մեկ ընդհանուր գումար՝ ըստ յուրաքանչյուր արժույթի: Միջոցների ուղղակի հատկացման հայտերի դեպքում այստեղ տրված գումարը (գումարները) պետք է համապատասխանի (են) Միջոցների ուղղակի հատկացման հայտի ձեւանմուշի [9]-ում նշված գումարին:

[16] Ստորագրությունը: Հայտի ամփոփաթերթը ստորագրվում է անձի (անձանց) կողմից, որը (որոնք) լիազորված է (են) Պետության լիազորված ներկայացուցչի կողմից տրամադրված՝ Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակի հիման վրա: Ստորագրությանը ներկայացվող պահանջները տե՛ս Միջոցների հատկացման հայտի ձեւանմուշում:

**ԱՌԴԻՐ 2. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿԻ  
ՁԵՎԱՆՄՈՒՇ**

[Պետք է կազմվի Պետության լիազորված ներկայացուցչի պաշտոնական բլանկի վրա]

[Ամսաթիվ]

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ

Ուան Իքսչեյնջ Սթրուեր,

Լոնդոն EC2A 2JN,

Միացյալ Թագավորություն

Ուղղվում է՝ Գործառնությունների կառավարման վարչություն

Ֆաքս՝ +44 20 7338 7017

Թեմա՝ Գործառնություն No. 51749 (Դրամաշնորհային բաղադրիչ)

Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակ

Հարգելի պարոն/տիկին,

Հայաստանի Հանրապետության, «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ի եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի **(Բանկ)** միջեւ 2021 թվականի \_\_\_\_\_-ին կքնված Դրամաշնորհային համաձայնագրի **(Դրամաշնորհային համաձայնագիր)** կապակցությամբ

տեղեկացնում ենք, որ ստորեւ նշված խմբերից յուրաքանչյուրի \_\_\_\_\_ անձանցից յուրաքանչյուրը, ում վավերացված նմուշի ստորագրությունները ներկայացված են ստորև, իրավասու է Պետության անունից մյուս խմբի (խմբերի) անձի (անձնանց) հետ համատեղ ստորագրել Միջոցների հատկացման հայտերը վերը նշված Դրամաշնորհային համաձայնագրի ներքո:

Խումբ 1 (Ծրագրի իրականացման կազմակերպություն)

Խումբ 2 (<< ֆինանսների նախարարություն)

Խումբ 3 (\_\_\_\_\_)

Տեղեկացնում ենք, որ ստորև նշված \_\_\_\_\_ անձանցից յուրաքանչյուրը, ում վավերացված նմուշի ստորագրությունները ներկայացված են ստորև, իրավասու է Պետության անունից ստորագրել վերը նշված Դրամաշնորհային համաձայնագրի ներքո Միջոցների հատկացման հայտի ամփոփաթերթերը և Միջոցների հատկացման հայտին ուղեկցող ցանկացած այլ ծանուցում/փաստաթուղթ:

Խումբ 1 (Ծրագրի իրականացման կազմակերպություն)

Տեղեկացնում ենք, որ ստորև նշված երկու անձանցից յուրաքանչյուրը, ում վավերացված նմուշի ստորագրությունները ներկայացված են ստորև, իրավասու է Պետության անունից ստորագրել ցանկացած այլ ծանուցում/փաստաթուղթ, որը պահանջվում է կամ թույլատրվում է կատարել վերը նշված Դրամաշնորհի համաձայնագրով:

Խումբ 2 (<< ֆինանսների նախարարություն)

Բոլոր նախկին ծանուցումները, որոնք տրամադրում են վերոնշյալ Դրամաշնորհի համաձայնագրով Պետության անունից ստորագրելու լիազորություն ունեցող պաշտոնյաների ստորագրությունները, սույնով չեղյալ են հայտարարվում:

Հարգանքով՝



**[ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ]**

**համար եւ նրանց անունից**

---

Անունը՝

Պաշտոնը՝

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝      ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ  
ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

- Վերը նշված՝ լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակը պետք է ստորագրվի Պետության անունից՝ իր համապատասխան Լիազորված ներկայացուցչի կողմից:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտորուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտորուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**